




ԱՐՏԱԿ ՄՈՎԱԾԱՅԱՆ

# ՄԲԱԶԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՎԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԱԿՈՐ ՍՄԵԱՅԻ ՀՆԱԳՈՒՅՆ  
ՀՈԳԵԿՈՐ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ



}} 9134 S. Ludwigskirche Sprengelstr.

176/18

949,923

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՏՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՎԵՐԵՄՈՒՄ ԱՐԽԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՏՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՎԵՐԵՄՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՎԵՐԵՄՈՒՄ  
ԱՐԽԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՏՈՒՄՆԵՐԻ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՄՐԲԱԶԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ.

A II  
85879

ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅԻ  
ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ  
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ



ՀՀ ԳԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ, 2000

ՅՏՀ 93/99  
ԳՄՆ 63.3  
Մ 917

Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Գրքի հրատարակության նախաձեռնում է հեղինակի սփյուռքահայ  
քարեկամ ՍԱՐԳԻՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԸ (Բեյրութ-Մանրեալ)

Մ 917. Մովսիսյան Ա.

Արքազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն  
հոգևոր քնկալումներում. - Ե.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000. 56 էջ

Գրքի շապիկին շունթական կնիքադրոշմի հատված է Անտիոքոս Ա Երվանդունի  
կառույցած սրբազանքը Նեմրոտ խան վրա (Կոմագենե)

0500020913  
Մ \_\_\_\_\_ 2000  
70(02)-2000

ԳՄՆ 63.3

ISBN 5-8680-0431-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000  
© Մովսիսյան Ա., 2000

## ՆԱԽԱԲԱՐ

*Աշխուհեանքը հարցոյցէն Հատուկն.  
«Ասա մեզ, ինչպե՞տ է կցնի մեր վերջը»։ Հօտան առայ.  
«Մայն չ' եր գոյր սկիզբը, որոնքնի վերջը որոնք.  
Ճանքի որոնք սկիզբն է, այնտեղ էլ վերջը կցնի»...*

### Ավետաշան ըստ թիովմասի (պարականուն)

Ինչպէս ամեն մի անուանի, այնպէս էլ ժողովուրդների կրօնքում ճգնաժամերի հարթանալումնից հետո գալիս է մի այսին կանգ առնելու, ինքնամփոփելու, անցածը վերինատափարելու և ապագայի համար ուղենիշեր փնտրելու ու ճշտելու: Գերիսնդիք են դառնում հազարամյակներ առաջ ձևակերպուած հարցադրումները, քն՝ օտ՝ վ են եւ, որտեղի՞ց են գալիս և ո՞ր պլանի գնան:

Անցնող հարյուրամյակում հայ ժողովուրդը հարթահարեց իր պատմութեան ամենատեսական և ամենամանր ճգնաժամը՝ պետականութեան կոլլապսից, դարեր շարունակ մաքրանելուց ու ցեղասպանութեան ենթարկվելուց հետո վերակազմակերպելով անկախ պետականութեան: 1918թ. ստեղծված Հայաստանի Հանրապետութեանը ըստ կարճ կյանք ունեցած: Ինքնապաշտպանական պատերազմները, սակայն ու համաճարակների դեմ պայքարը պարզապէս ժամանակ չտվեցին նշված հարցադրումներին անդադրանալու: Խորհրդային Հայաստանում եւ չիին կարող պատասխան գտնել այդ հարցերին. արգելված էին կամ առնվազն չէին խոստովանում ազգային գարեթերի տանող բարի հնաշավոր քայլերը: Սփյուռքում արվեցին քայլեր այդ ուղղութեամբ, բայց օպիորդի վերխուճից, ի վերջո, աշխարհով մեկ ցրված հայութեան ազգապահպանումն էր: Եվ, թերևս, ներկա սերնդին է վիճակված այդ հարցադրումների պատասխանը տեսնալու և դրանք ազգային գիտակցութեան աստիճանի բարձրացնելու ճակատագրիկ, մասնավորապէս որ լրացուցիչ մտորումների առիթ են տալիս դարի ու հազարամյակի ավարտն ու նոր դարաշրջանում ազգի ապագայի խնդիրները:

Ներկայացվող աշխատանքը մեծ հավակնութեամբ կունի, այլ համարձակ փորձ է պատասխանելու ինքնամանապէս հարցադրումներին: Երկուսին՝ ուղիքի ի վերջ մենք ի սկզբանէ և որտեղի՞ց ենք գալիս: Ինչպէ՞ս է մեր երկիրը ներկայանում իմն աշխարհի ժողովուրդների (որոնց մի մասը ժամանակի ընթացքում հետագայ պատմութեան բառերաբանից) լիցքավորական աշխարհընկալումնեղում, ո՞րն է նրա խորհուրդը, ուղիք՞ը են եղել մեզ մայրնիները և ի՞նչ: Ինչ են կատարել իմն աշխարհում, ամենք՞ն են աղոյր որևէ առարկութեան և երբ այդ ո՞րն է դա: Մրանք հարցել են, որոնց պատասխանները դարերի բազմապիսի փորձութեաննի ընթացքում մեծ մասամբ կորցրեց մեր ժողովուրդը, բայց, ի բարեբախտութեամբ մեզ, որոնք մասին տեղեկութեաննի են պահպանվել իմն աշխարհի բազմապիսի

գրավոր հիշատակարաններում, որոնց վերծանումն իրականացավ վերջին երկու դարերի ընթացքում:

Այս գրքով լեզվ առաջին անգամ փորձ է արվում ի մի բերելու Հայաստանի մասին փաղկապեղծ պատկերացումների առանձին դրվագները, որոնք պահպանվել են համայնաբանական (նատկապես արևմտյան) քաղաքակրթության գլխավոր բնօրրաններից մեկում՝ Առաջավոր Ասիայում: Ընդ որում, դրանց վկայակոչման մեջ խստորեն պահպանվել է ոչինչ չափելացնելու և չպակասեցնելու սկզբունքը: Նյութի շարադրման մյուս սկզբունքը եղել է եմագոյն պատկերացումների վերականգնումն նախ ըստ օտար տեղեկությունների, ապա (որպեսզի բացառվի ազգային կողմնապահության արտահայտությունը) միայն դրանց մասին հայկական սկզբնաղբյուրներին անդրադարձալը: Միաժամանակ, այս փորձն առաջինը լինելով չի հավակնում վերջնականության և հետագայում կարող է խամաղվել նոր տեղեկություններով:

### ԱՍՏՎԱՏՆԵՐԻ ՄՈՏ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով քաղաքակրթության պատմության մեջ սկսվեց նոր՝ հելլենիզմի դարաշրջանը: Հելլենական մշակույթը բախանցեց Հին Արևելքի երկրներ, իսկ Արևմուտքում ծանոթացան արևելյան մշակութային նվաճումներին: Նման փոխադրությունների դարաշրջանում աչքի ընկան մի շարք խոշոր գործիչներ, որոնցից մեկը Բաբելոնի գեոգրոգոյն աստված Բեիի տաճարի բրոնզապետ Քերոսոսն էր<sup>1</sup>:

Ենված լինելով Ք.ա. մոտ 350 թ. և առաջած լինելով Ժամանակի համար դասական կրթություն՝ նա Ք.ա. 4-րդ դարի վերջին մեկնում է Հունաստան և այնտեղ եղնում աստղագիտության դպրոց: Ք.ա. 290 թվականին վերադառնալով Բաբելոն՝ Մեղևկյան Անտիոքոս Ա Մոտեք արքայից պատվեր է ստանում գրելու Բաբելոնի պատմությունը՝ հունարեն: Բրոնզապետը, բավազույն ծանոթ լինելով միջագետքյան սեպագիր արձանագրություններին, գրեց «Բաբելոնիկա» եռահատոր աշխատությունը: Սակայն այդ խիստ արժեքավոր գործը չի պահպանվել մինչ օրս, նրանից մեզ են հասել միայն հատվածներ՝ գեոտեղված ոչ հեղինակների երկերում, որոնք ևս մեծ կարևորություն են ներկայացնում էին աշխարհի պատմության ուսումնասիրության առումով<sup>2</sup>: Պահպանված հատվածներում ուշագրավ տեղեկություններ կան նաև Հայաստանի մասին, որոնցից առանձնանում է

<sup>1</sup>Քերոսոսի կյանքի, գործունեության և թողած ժառանգության մասին մանրամասն տես Տ. Schnabel, 1923 գրքում:

<sup>2</sup>Քերոսոսի աշխատության առանձին հատվածներ մեզ են հասել ավելի ուշ շրջանի հեղինակների (Հովսեփոս Փլավիոս, Եվսեբիոս Կեսարացի և ուրիշներ) երկերի միջոցով, որոնք ի մի են բերված Փ. Ընաթիլի վերջ հշված ուսումնասիրության վերջում գետեղված հավելվածում (չջ 250-275): Քերոսոսից օգտված որը հեղինակների (Ալեքսանդր Բազմավեզ, Արչուպիոս և ուրիշներ) գործերը ևս մեզ չեն հասել:

համաշխարհային ջրեղեղի մասին բարեղնյան պատմությունը:

Ըստ Քեյտսոսի հաղորդած ավանդության, Աստված պարսպաքյուսնից հետո վեց անգամ հայտնվում է մարդկանց տալով պատգամներ (այդ թիվը համընկնում է աստվածային համարված սրբազան զլբերի բանակին): Սակայն մարդկանց ճնշազգործությունը սպասեց Աստու համընկությունը. և Աստված որչեց պատժել նրանց ջրեղեղով: Աստու աքյալաղատ աչքը չանտեսեց նաև մի բանի բարեխաշտնեղին՝ Քախաթրոս աքքայի գլխավորությունը: Հենց նրան էլ պատվեցեց գլխի աննկ աշխարհի պատմությունն ու յարգանքն իտի տակ ջրեղեղեց փրկվելու համար, պատրաստել մեծ մազկերք անն բան պատրաստ էր, արքան գանկացավ իմանալ, թե ո՞ր պետք է հասնի իր մազկը: Երկնքից պատասխան ստացվեց՝ «Աստվածների մատ»...

Ջրեղեղը ոչնչացրեց մեղսագործ մարդկությունը: Հասնելով ցամաքի արքան իր կնոջ, դատել է մազավաքի հետ դուրս եկավ մազից և փրկադար լեռան վրա զոհ մատուցեց: Գոհացած աստվածներն անհատություն շնորհեցին նրանց և ընդունեցին իրենց մեջ: Կազմում մնացածները դուրս եկան և սկսեցին փնտրել աքքային ու նրա երեք ուղեկիցներին, սակայն՝ ապարդյուն: Երկնքից եկող մայրը նրանց տեղեկացրեց յոթ ընտրյալների ճակատագրի մասին, պատվիրեց վերադառնալ, զոհն էլ բարգված սուրբ գործին ու քաղազի բողոքին, վերահիմնել Բարեղնը: Աստվածային խոսքից հայտնի դարձավ մտև, որ իրենց փրկության երկիրը Հայաստանն է:

Փրկվածները վերադարձան Միջագետք և գործեցին լստ տված պատվիրանների: Քեյտոսն աճեցանում է, որ մալի բեկորների մինչև իր ժամանակները արտոպանվել են Հայաստանի լեռներում, որոնցից մայրիկ, պոկելով ճյուրի կտորներ, թախամաններ են պատրաստել իրենց համար՝

Հիշենք քրմապետ Քեյտոսի պատմությունը՝ վկայված նիս Միջագետքի սեպտվոր հիշատակարաններով: Երբ բարեխաշտ արքան գանկացավ իմանալ, թե ո՞ր պետի հասնի իր մազկը փրկվելու համար, երկնքից պատասխան յավեց. «Աստվածների մատ»: Իսկ երբ փրկվածները շաճ իջան մազից, երկնային մայրն ավետեց, որ նրանք Հայաստանում են...

## ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Դժվար է պատկերացնել աշխարհում մի ժողովուրդ, որն ունեցած յլնի տիեզերատեղծման, աշխարհաբարանան մասին ավանդազրույցներ: Հնագիտակ առ զրու յցնելուց ստաճիկ կարևորվում է հատկապես այն վայրը, որտեղ տեղի է ունենում արարչագործությունը: Հենց այդ տեղն էլ դասում է

<sup>1</sup>Ջրեղեղի պատմությունն՝ ըստ Քեյտոսի տե ս Schobel, 1923, էջ 264-266; Հոգնարո Փրավիտ, Ընդդմ Ապոնի, էջ 28; Հոգնարո Փրավիտ, Հրեական հեթանոսություն, էջ 54-55; Եսերի Պոմֆիլիայ Կեսարպոյ, 1818, էջ 15-18, 24-25: Տես նաև «Երբ ջրեղեղը որից անն բան» բանում:

աշխարհի կենտրոնը՝ երկրի պորտը, որով անցնում է երկրի (ու տիեզերքի) առանցքը, այնտեղից են վեր խոյանում տիեզերական լեռը, համաշխարհային ծառը կամ վերջինիս կերպավորումներ կենաց և իմաստության ծառերը: Աշխարհի կենտրոնում բարձրացող լեռը կամ ծառը դառնում է տիեզերքում մերչաշնակության պահպանման խորհրդանիշը, որի վերայու մի կտանի մատասկզբնական քառախ՝ տիեզերակարգի ոչնչացմանը: Ոստի և պատահական չէ, որ վիպա-առասպելական մտածողության մեջ արարչագործության կենտրոնը համարվել է առավելագույնս սրբազան մի վայր՝:

Արարչագործության մասին ամենավաղ գրի առնված գրույցների զգալի մասը մեզ է հասել Առաջավոր Ասիայից: Դրանցից առավել համրածայտը Աստվածաշնչի Մենդոզ գրքում պահպանվածն է: Աստվածաշնչյան ավանդության համաձայն՝ Աստու կողմից տիեզերքն ստեղծվեց վեց օրում և ավարտվեց մաքրու արարմամբ, դրախտի կենտրոնում կենաց ու իմաստության (բայու և յարի իմացության) ծառերի անճեռնով (Մենդոզ, I, 1-2, 15): Առաջվա չօրեռն դեռ աշխրներ կունենանց անդրադառնալու աստվածաշնչյան դրախտին, կենաց ու իմաստության ծառերին: Այստեղ բավարարվեց մշելով, որ դրախտի տեղդոշմանը ծառայող զգալիոր փաստարկը այնտեղից չոթս գետերի (Եփրատ, Տիգրիս, Գեհոն և Փլատոն) արտահոսելը, ամեկրայրենն ցույց է տալիս, որ Աստվածաշնչյան հիշվող դրախտը, հետևաբար մասն ցրտ կենտրոնում բարձրացող կենաց և իմաստության ծառերը գտնվել են Հայկական լեռնաշխարհում: Այլ կերպ ասած՝ արարչագործության կենտրոնն, ըստ Աստվածաշնչի, Հայաստանի տարածքն էր:

Թեքևս ավելի սպասելի պիտի լինել, որ Հին Կտակարանը գրի առած հրեաներն արարչագործության կենտրոնը համարելին իրենց հայրենի երկիրը, ինչը, սակայն, այդպես չէ: Այս փաստն առավել ուշագրավ և հատկանշական է դառնում, երբ Հայկական լեռնաշխարհը որպես արարչագործության կենտրոն է հանդես գալիս էին Առաջավոր Ասիայի մի շարք ժողովուրդների տիեզերաստեղծման ավանդություններում, որոնք գրի են առնվել Հին Կտակարանից դարեր առաջ:

Միջագետքի հարավի վաղագույն բնակիչները, որոնք մեզ իայտնի են գրավոր հուշարձաններով, չունեինքն են՝ ցույսօք չարգարանված ծագումով մի ժողովուրդ, որը՝ ստեղծեց յուրօրինակ մի քաղաքակրթություն (այդ բժում՝ հիմք դրեց սեպագրությանը) և Բ. ա. II հազարամյակի սկզբնին հետագավ պատմության յատերարքեմից:

Բ. ա. III հազարամյակի I կեսին Արարական բերակրողց Միջագետք ներթափանցելին սեմական ծագում ունեցող գեղեր, որոնք կենտրոնական Միջագետքում ստեղծելին մախ Արալի, հետագայում՝ Բարելոնի բազա-

<sup>1</sup>Աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մասն ենան արտակերպությունների մասին տես Վ. Բ. Տուրոբալի "Тора", "Архео жеман", "Архео митрог", "Архео оскаваня" (МНМ, т. 1, 1992, с. 311-315, 396-407), "Пун жеман" (МНМ, т. 2, 1992, с. 350) հոդվածները:



փոստրոններ, իսկ հրափռան Ասորեստանը: Երանք յուրազրեցին յամբարական քաղաքակրթության նվաճումները՝ յուրովի զարգացնելով դրանք: Փոխառությունների մեջ մեծ տեղ էին զբաղում Խոզոր արժեքները, այդ թվում՝ պարսկագործության վերաբերյալ որպէս ախանրագույցներ, որոնք սերտանցին սեմականների հետ: Շումերական քաղաքակրթության նվաճումները սեպագրի հետ տարածվեցին նաև այլ ժողովուրդների շրջանում: Այդ է պատճառը, որ Միջագետքի հնաքնակ տարբեր ծագում անցող ժողովուրդների գրավոր հուշարձաններում հաճախ են հանդիպում մամուրյումներ և քնդիանություններ, որոնց մի մասին առիթներ կանխմանը անդրադառնալու մեր աստղիկա շարադրանքում:

Տիեզերատնդածան վերաբերյալ յոմերական անբողական բնագիր մեզ չի հասել: Այդ մասին առանձին դրվագներ են ներկայացվում զանազան բնագրերում, որոնցից ենայսպիսի չէ վաղին վերականգնել տիեզերատնդածան յոմերական ավանդությունը:

Արարչագործության մասին պատմող էին միջագետքյան ամենատարգմական բնագիրը բաբելոնյան «Էնուրա էլիլ...» («Երբ վերևում...») պոեմն<sup>1</sup>: Երբևրևում պատմվում է, որ նախակերտական ժամանակաշրջանում «եթը վերևում անվանակալված չէր երկինքը, իսկ ներքևում ցամաքն էր ամառան», երկու աստղաստեղծ օվկիանոսները՝ Ախտան (յոմնի, Արգոն) և նախամայրի միամայր, «իրենց ջրերը խառնեցին մեկտեղ», և ծնվեցին աստվածների աստղյակ սերունդները: Երանց անհամազուտ վազբը, սակայն, սկսեց զայրացնել երկու մախաստեղծ աստվածներին, որոնք որչափ են ոչնչացնել երկուստապալ աստվածներին: «Արցիմներին փրկեց Թրանցից լիաստեղծությունը՝ Հայան<sup>2</sup>, որը սպանեց Ափտան և նրա վրա քարծխաքրեց իր կազարտեր՝ կոչելով հենց «Ափտան»<sup>3</sup>: Քառախց ա-

<sup>1</sup>The Creation Epic, ANET, p. 60-72 (tr. E. A. Speiser); MM, p. 228-277 (tr. St. Dunlop); "Корань мессы...": "Эпоса Эану" (История о сотворении мира), ROTCC, c. 32-51, (пер. В. К. Ахремеева). Դեռևս անվանակալված է ջուտ սկզբնաբառերի:

<sup>2</sup>Հայան (Էա, շոմիր, էնկի՝ «տիրակալ երկր») բնագրում հանդիպում է նաև «Նոտիմնուր» մակդիրով, որը նշանակում է «տնդածու, արարիչ»: Հայան էնկիի արարչագործության քաղմարիկ դրվագից են պատմվում միջագետքյան մի շարք բնագրերում (այդ մասին՝ ստորև):

<sup>3</sup>Արգոն (Ափտոն) անվամբ Միջագետքում աստվդայախ հայտնի էին ասորերկրյա օվկիանոսը, որի սխրակալն էր Հայան-էնկի, և ուրջ ստեղծ տաճարներից Նոտիման (Ափտոն) և խոտիակոս ավանդություններում Արգոն հանդես է զայն նաև որպես երկրային տարածք (խոտիականում՝ քոտար, տե՛ս NYH, c. 309), որը, թեև, ասորերկրյա օվկիանոսի և երկնքի կապի շրջանն է: Հին միջագետքյան պատկերազարդության մեջ տվողապար Եփրատն ու Տիգրիսը սկզբնավորվում են Արգոի տիրակալ Հայան-էնկիի սուրբի շրջանից կամ ձեռքի շոնամ սկզբից (տե՛ս նկար 1-2): Նույն աստվածը հայտնի է նաև «Ո՛նի նազրե»՝ սակունքների տիրակալ-սխաղոսով (վնչ, հատկանախորեն, վերաբերում է Եփատի և Տիգրիսի ակունքներին), Եփրատով հոսող նարս ջուրը հանարժիկ է Արգոնի սկզբ անող (A collection of Sumerian and Akkadian Incantations, Graz, 1958, IX, p. 110-124, հղումն ըստ

զատկամ իր նոր կացությանում Հայան մերձենալով կնոջ հետ՝ ծննդ Մարտիկին: Կարգ ու կանոնի հաստատակիր յատուտ և ամուսնու վրեժը հանգիստ չեն տալիս թխամարին, որը որոշ ժամանակ անց մայրախ է դուրս գալիս երկուստարդ աստվածների դեմ: Նրանցից և ոչ մեկը չի համոզվում դուրս գալ թխամարի դեմ, և դասթույնը փրկում է միայն պատանի Մարտիկը: «Վերջինս համաձայնում է մարտնչել ընդդեմ թխամարի, երև ընդդեմ աստվածներից ճանաչելն նրա գերագույն իշխանությունը, ինչլիս սրվում է համաձայնություն՝ Վճռական մարտում Մարտիկը հաղթում է թխամարին, և սկսվում է տիեզերքի աջալուծը նրա կողմից: Թխամարի մարմինը երկատելով՝ նա մի կեսից նախ ստեղծում է երկինքը, ապա գլխի վրա բարձրացնում է նախնական լուր, որի ներքից՝ թխամարի եզկո աչքերից բխեցնում է Տիգրիսն ու Եփրատը՝ Մարտիկ մյուս կեսից Մարտիկը ստեղծում է երկիրը և ամրապնդում երկնքի ու երկրի կապը: Այնուհետև Հայրա աստվածն աքաբում է մայրկաշվից ցեղը, «Արգոնի» նմանությամբ աստվածների կառու-

ճարատում, 1987, էջ 262-263): Արգոնում էին պահվում տիեզերքը կառուցարող աստվածային սուրբ օրենքները («մե»), իսկ շունբրական էպոսում «աստվածային սուրբ օրենքների երկիր» է կոչվում Արատում՝ Հայկական լեռնաշխարհի ցայտը հայտնի առաջին պետական կազմավորումը (տես էջ 36, ծնթ 1 և Հավելված Ա): Նշված փաստերը գուցե են տալիս, որ ստորերկրյա օվկիանոսի և երկրի կապի շրջանը, վերերկրյա Արգոն այն շրջանը, որում Հայան տարանցի նախաստեղծ Արգոն-օվկիանոսին և նրա վրա կանգնելուց «Արգոն» կոչվող իր կայարանը, գտնվել է Հայկական լեռնաշխարհի տարածքում: Նման եզրահանգման օգտին է խոսում Հ. ա. III հազարամյակի միջուկադրյան մի կնիք (նկ. 1), որին Հայո-Էնկին պատկերված է եփրատն ու Տիգրիսը խորհրդանշող ջրաշիջելով և մի սուրբ Հայկական լեռնաշխարհի հարցալը եզկող Մաշու (Մախիտա-Մափոն, տես էջ 13, ծնթ. 1) լեռներից հեկամ (որոնց մեջտեղից ծաղկում է արևը): Նույն կնիքի վրա Հայո-Էնկիի ոտքերի միջևճառում պատկերված կենդանին ցույց համարելով Ա Փիլիպոսյանն ու Հ. Բանաչյանը այն դիտարկում են որպես «խորհրդանշային աշխարհագրական ժամկապի»: Տալիոսյան լեռների, և վերջիններս Եփրատի ու Տիգրիսի ակունքի շրջանի հետ համարում են Արգոնի տարածքը: Հեկնակնեթն Արգոնի հետ են կապում Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններ՝ Արգիրի, Արատեղ, Ապոսեկանը, Ասիգոն, Ապրափծոր, Բազու, Բզնունք, Բզնունյաց լեռներ, Բզնունյաց ծոց (և կղզիներ) և այլն (Փիլիպոսյան, Բանաչյան, 1997, էջ 67-69): Ա. Փիլիպոսյանի ու Հ. Բանաչյանի դիտարկումը կապված ցույց և Տալիոսյան լեռների հետ, շահեկան կցիներ խնդրի լուծման համար, սակայն նարկ է նշել, որ պատկերված կենդանին ոչ թե ցույ է, այլ՝ այծ (վիթչիկն կապվում է Հայո-Էնկիի պաշտամունքի հետ, կենդանուսեր պատկերվելիս նա ներկայացվում էր այծի գլխով և ձկան մարմնով, իսկ նրա նաջը կոչվում է «Արգոնի այծ»): Այդուհանդերձ, Մաշու լեռների առկայությունը, ինչպես նաև շունբրական «Էնկի և Նշիմախ» անցի համաճայն՝ մարդու աքաբումը Հարախում Արգոնի կապից (տես «Ատոն» պատկերով ու նմանությամբ լուծվում) և մեր վերջ շարադրած փաստարկները լուծվում բաժնադար են Արգոն-Հայկական լեռնաշխարհի կապը ցույց տալու համար: «Պեռնի մեկնություններում այս մասին մանրամասնվում է «Տիգրիսը նրա աջ աչքի է, Եփրատը՝ ձախ աչքը» (ՌՕՏՑ, ս. 287):

գրո՞ւմ են Բարեպետը «Աստուծո՞ւ արարածները», ո՞ր հավիտյանս այլտի իշխեր Մարտոկը բարեխնդիրների գերագույն աստվածը՝

Տիեզերաստեղծման այս արամուրթյան մեջ, իբրև արարչագործության կենտրոն, նսնդես է գալիս նախնական լեռը՝ քարծխազգամ Թխածափի գլխի վրա, որը յուրօրինակ կապ է դասնում երկնի և երկրի միջև: Լեռից սկզբնավորվում են Տիգրիսն ու Եփրատը, այսինքն՝ աշխարհ ևս արարչագործության կենտրոնը Հայկական լեռնաշխարհի տարածքն է:

Բառասպելն ուժերի դեմ հաղթանակի, սպարոված հակառակորդի վրա լեռ բարձրացնելու և նոր աշխարհակարգ ստեղծելու պայծառ է քնկած նաև յուրենրական Նիմուրթա աստծուն (գերագույն աստված Էնլիլի որդուն) փառաբանող վիպաարձ՝ Հատկանշական է, որ այստեղ ևս նույն աշխարհակարգի հաստատումը տեղի է ունենում Հայկական լեռնաշխարհում՝ Տիգրիսի ակունքի շրջանում:

Հին միջագետքյան աշխարհկենտրոնների համաձայն՝ տիեզերակարգը հաստատուն են պահում Մաշա (Մասա) լեռները, «որ ալգալոյսն ու մալլանուտն են ամեն օր պանազանոս, վերևում հասնում են երկնային ծովածքին, ներքևում՝ նրանց կտրծրը տանդարամեղին է հասնում»՝: Այս լեռները, որոնց Գիլգամեշը հասնում է անմահության երկրի ճանապարհին (որը ձգվում էր Եփրատի ակով), և՛ տեղանքով, և՛ անվամբ նույնանուն են Հայկական լեռնաշխարհի հայտնից եզերող Քաշխարի (Ներկայումս՝ Տոր-Արլիկն) լեռներին, որոնք համական և միջնագետքյան հայկական աղբյուրներում հայտնի են Մասիտա և Մասիոն անուններով՝

Սեմական գեղերի արեմտյան մի հատվածը բնակվելով ներկայիս Սիրիայի ելուսխում՝ Թ.ա. 14-13-յդ դարերում ստեղծեց Ուգարիթ քաղաք-պետությունը, որից մեզ են հասել մեծ թվով գրավոր հուշարձաններ: Ուգարիթյան բնագրերի համաձայն, նրանց գերագույն աստված Ելուի (Էլի) բնակավայրը գտնվում էր Մեծ Գեռի ակունքներում, որտեղից սկզբնավորվում էին երկու օվկիանոսները՝: Ուգարիթյան տեղեկությունների քննությամբ եին առաջադրյախական պատկերացումների համաստեղծում քույլ է տալիս Ելուի (Էլի) բնակավայրը տեղադրել Հայաստանի լեռներում, Մեծ Գեռը նույնացնել միջագետքյան անմահության երկրի և Աստվածաշնչի Եղեմի մայր գետի հետ (տե՛ս «Աստուծո՞ւ արարածները ա՛ն մահությանը» ակնարկում), իսկ երկու օվկիանոսների (երկնային և երկրային կամ, զուգե, ստորերկրյա) սկիզբը մեկնաբանել իբրև աշխարհաբարձան կենտրոն՝:

<sup>1</sup>Պոնեմ պաղագական տարեկական Մարտոկին փոխադրվում է Աշուրի գլխավոր աստվածը (ՅՕՏՇՇ, Է.284), որը, ծանկանափորեն, պայմանափորված է վեջինիս գերագույն իշխանությունը շնչելու միտումով:

<sup>2</sup>van Dijk, 1983; Kramer, 1961, p. 79-82; Kravce, 1965, Է. 206-208; ETCSL, 1.6.2.

<sup>3</sup>ԱՄՊ, Էջ 143; ՈՒՄԱԲ, Է. 200-201; ANET, p. 88; MM, p. 96.

<sup>4</sup>Տե՛ս «Անմահության սրբոտմներում. Հայոց երկրի ճանապարհը» քաճմում:

<sup>5</sup>Ունդուտ, 1987, Է. 56, 85 (նաև եղված գրականությունը):

<sup>6</sup>Lipinski, 1971, p. 41-57:



Նկ. 1



Նկ. 2



Իր արարչագործության կենտրոն հանդիսացող Իլյո (Էլ-կոն)ը (չի) աստծո քննադատելին ցտեսել է Հայկական լեռնաշխարհում, ակնհայտ է նաև քանոնական մի ասքի ուշ խեթական տարբերակից, որի համաձայն նա քննադատ էր Արեմոտյան Եփրատի (քննադատմ Մարա) ակոնքի մաս<sup>1</sup> :

Տիեզերատեսիլման մասին հայկական նախադրյալներում ակնհայտ է դառնում ինչ չեն հասել Հայ մատենագրության և ժողովրդական բանավորության մեջ պահպանված տեղեկությունները, սակայն, ոչ միայն ցոյց են առնում մասն ակնհայտության գոյությունը նախադրյալներում և Հայաստանում, այլև դրա համանմանությունը Առաջադր Ասիայում տարածված վերակայալ պատկերացումներին: Մասնավորապես, որպես արարչագործության կենտրոն տեղեկական լեռ է հանդես գալիս մախալքիստոնական Հայաստանի գլխավոր հոգևոր կենտրոն Բարձր Հայք նահանգը, որ գտնվում էին Հայք ստեղծված Արամազդի (Մայք դիպոնի Ա-նահիսի, Նանն աստվածուհու, Արեգ-Միլքի և այլ պաշտամունքային կենտրոններ: Բարձր Հայքն «Աշխարհացոյցում» քննարկվում է հետևյալ կերպ. «Այս երկրամասը, իրապես, ինչպես ցոյց է տալիս իր իսկ անունը, բարձր է ոչ միայն Մեծ Հայքի մեջ գտնվելու, այլև այդ աշխարհից, այդ պատճառով էլ նրան աշխարհի գագաթ են կոչել: Նա զետեղ է արծալում աշխարհի յոթ կողմերը. (Բարձր Հայքից) սկզբ են առնում չորս խոշոր գետերը<sup>2</sup>... Իսկ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» էջերում պահպանվել է Բարձր Հայքի լեռներից մեկը անունն ու բնութագրվող «... Մեծ լեռան վրա» աստվածների տեղում, որ կոչվում է արսո Նահատա»<sup>3</sup>: Չորս խոշոր գետերին մեկը կանոնադրյալները դասադի մասին խոսելիս, արտեր արծալանագրված միայն, որ հին հայոց աշխարհը լրացնում էր մեծ Բարձր Հայքը համարվել է «աշխարհի գագաթ», իսկ նրա Մեծ լեռը «աստվածների տեղ»: Ուշագրավ է, որ «Աշխարհացոյցը» «աշխարհի գագաթ» անունով է հիշում Բարձր Հայքի հարևանությանը տարածվող Բյուրակնի լեռների (որտեղ, ըստ մինչև մեր ժամանակների պահպանված հայկական ավանդազրույցների, գտնվել է երկային զբաղոթը) ամենաբարձր գագաթը՝ Սերմանց (Մրմանց) լեռ<sup>4</sup>: Այն կարող է համապատասխանել ներառյալ-

<sup>1</sup> E. Ascherti and Storm-god (tr. A. Goetze), ANET, p. 519; ԽՄԿ, Է. 167-169; Լոնսկի, 1971, p. 56. Խեթական միջավայրում մայն գետի սրբազան համարվելու մասին տես ԽՄԿ, Է. 186-191.

<sup>2</sup> Երեմյան, 1963, էջ 106; Անանյա Երևանյացի, 1979, էջ 291.

<sup>3</sup> Փաստոսի Բիսպոսացոյ, 1912, էջ 327: Չորսուր քննարկում «... Ի Մեծի ճիւղին ք տեղի դիցի» գոր կոչին արսո Նահատա»: Աշխարհաբար բարձրանության մեջ այս հասկանալի ճանաչվում տեղականապես համարվել է «մեծ լեռների» բարձր «... Մեծ լեռան վրա, աստվածների (ճեղխանների) տեղում, որ կոչվում է Անահիտի արսո» (Փավստոս Բուզանդ, 1968, էջ 259): Գ. Պատկանյանը և նրան նմանելով Սե. Մախալքանցի ցտեսել են, որ «արսո Նահատա»-ի փոխարեն պետք է կարդալ «արսո Անահատ» (Փավստոս Բուզանդ, 1968, էջ 259, 335, ծժք. 170):

<sup>4</sup> Երեմյան, 1963, էջ 107-108; Անանյա Երևանյացի, 1979, էջ 293.

կան ազանդագրությանը սերմնաժայռային կենսածին լեռանը՝

Տիեզերական լեռ սովորաբար հանդես է գալիս եռամաս կառուցվածքով, որի զազարին բնակվում են աստվածները, լեռան տակ՝ չար ուժերը, իսկ կենտրոնում (երկրի վրա)՝ մարդիկ<sup>1</sup>։ Մեծ Մասիսը հայ մատենագրության մեջ հայտնի է իբրև «արեգակնաճև լեռան»<sup>2</sup>, «քարձրագոյն լեռան քան լան աննայն տիեզերս»<sup>3</sup>, որի լեռնաբուն բնակվում էին չար ուժերը՝<sup>4</sup> «Կս ցո յց է տալիս, որ հայոց վաղճրական հավատալիքներում Մեծ Մասիսը ևս ներկայացել է որպես արարչագործությունից հետո տիեզերակայքը գահաջանող սրբազան լեռ

## ԱՐԵՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ

Աստվածաշնչում դրսևորող Եղևնը, կերպարակվում է «արևելքի կալմուն» (Մենուց 2, 8)։ Մենուց գլխի մեկ այլ մասում սրբաբնակվում է, որ Եռյի տապանը փրկվեց Արարատի լեռներում (իճա Հայաստանում), հետո զենևա մեկ լեզվով խոսող մարդիկ «արևելքից» գնացին և Սենաարի երկրի մի քաղաքում «որչեցին կատուցել երկնամաս «քարեղևյան աշտաբաղը»՝<sup>5</sup> «Իրա հասար Աստված խոստնեց մարդկանց լեզուները և սփռեց նրանց աշխարհով մեկ (9, 1-9)։ Երկու դեպքում էլ Հայաստանը (Եղևն - դրախտ և Աշտաբատի լեռներ) ներկայացվում է իբրև արևելքի երկիր, միևնույն, այն Հին Կաակասոսը գրի առած կրեաների երկրից հյուսիս էք գտնված։ Եռյն գլխի մեկ այլ դրվագում Երկրի սակաճ կրկնվում է միևնույն պատկերագրումը. «Եվ Հակարը ճամփա կլավ և գնաց արևելքի որդիների երկիրը... Եվ Հակարն ստաց նրանց, «Երբայքնեթս, որտեղի՞ց էք դուք»։ Եվ նրանց տասպին, «Մենք հրատանից ենք»...» (Մենուց 29, 1-5)։ Հակարը Պաղեստինի հարավային Բեջասարե քաղաքից ճանապարհով մ է Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան աանմանի հարևանությամբ գտնվող հյուսիսմիջագետքյան հրատան քաղաքը, որը, չնայած Բեջասարից տվյալ հյուսիս գտնվելուն, կոչվում է «արևելքի որդիների երկիր»։ Բնված փաստերը ցույց են տալիս, որ գոնե Մենուց գրքում Հայկական լեռնաշխարհը որոշ հայակից շրջանների հետ համարվել է «արևելքի երկիր»<sup>6</sup>։ Որտեղի՞ց է գալիս նման պատկերագրումը.

<sup>1</sup>Մարտիրոսյան, 2000։ Հեղինակը հավելում է տիեզերաստեղծման ախտերաբանության մասերն տեսնել «Սասնո ծեղր» եպոսի աստղին մասում, որ «Կապու ծովը» (որին «ծեղր չկա») խորհրդանշում է տիեզերական օվկիանոսը, «չոք թաղթ» տիեզերական լեռը, նրանից բխող և որտեղ յոթս թայթք բռնած» «ալիտակ աղբյուրը» «աննամական» ցուրն ու աշխարհի չինս կազմեք ոտզող դրախտային գետը։

<sup>2</sup>Тосорон Б.Н., "Тора", МНМ, т. 1, 1992, с. 311-315.

<sup>3</sup>Մովսիսի Խորենացույ, 1913, էջ 39.

<sup>4</sup>Նրան սրտանից, 1842, էջ 14.

<sup>5</sup>Մովսիսի Խորենացույ, 1913, էջ 192։ Մեծին Վարդանույ Բարձրերկրցույ, 1861, էջ 51։<sup>6</sup>Նամանակյան, 1969, էջ 362-364, 481.

<sup>7</sup>Նաթի է կել, որ Հին Կաակասում միջո չև «արևելք» ամվելով հասկալում

Միջազգայրյան «Կիզամեն» էլրատմ դրախտի ու անժողովրդյան երկրի սահմանը Մաշո<sup>1</sup> լեռներն են, որ սեղի են օտեննում արևածագն ու մայրամուտը .

Եւս յսել էր լեռների մասին, որոնց անունն է Մաշո .

Հենց որ այդ լեռներին մա մտեցաւ,

Որ այգալոյսն ու մայրամուտն են անն որ պահպանում,

Վերեւն իսսնում են երկնային ձուլվածքին,

Վերբևում նրանց կործր սանդարամետին է իսսնում .

Մաղդակարիճներն են պահպանում նրանց յայտալաները .

Անարկու է տեսք նրանց, հայացքը կործանող,

Երանց աղալածող փայլը լեռներ է տապալում :

Արեզ ծագելիս ու մայր մտնելիս Արևն են նրանց պահպանում .<sup>2</sup>

Աշխիթն՝ ըստ հին միջազգայրյան պատկերացումների (որոնց մի մասը տեղ է գտել Աստվածաշնչում), Հայաստանը արևածագի (արևի եզման արևելքի) ու մայրամուտի երկիրն էր, արևի հանգվածատեղը էլ Միջազգայրից ու Պարստանից հյուսիս տալածվող լեռնաշխարհի կամարվել է «արևելք» ոչ թե ըստի աշխարհագրական կողմ ցույց տվող, այլ «արևի ելքի երկիր» իմաստով : Հեռագայում մախմուկան իմաստը մառազվել է, և ըստն ընկալվել է աշխարհագրական իմաստով : Ասվածքը կայելի է երմնագրից մաև նրանով, որ Հայկական լեռնաշխարհի արևի հանգվածատեղը լեռնալու մասին պատկերացումը պահպանվել է մաև իտերական աղբյուրներում : Վերջիններիս կամածայն, այնպալը ծագում էր «Արևելյան ժողից», սրբ, դատելով փաստերից, «Կանա յնի իտերական անվանումն է՝ Դա լեռնալին համառնույն : Գ. Մովսնմտյանցի 19-րդ դայում գրի ստած կայկական ավանդալրայներին, որոնց կամածայն արևի ննջարսներ գտնվում էր Կանա յնի հատակին, որտեղից աննն ստավուս եմում և որ աննն գլշեր վերադարնում էր ցերեկվա լուսատունն<sup>3</sup> :

Հայաստանի՝ արևելքի երկիր (ոչ աշխարհագրական իմաստով) լեռնալու մասին չափազանց հետազոթրի տեղեկություն է պահպանել «Սասնա

Հայկական լեռնաշխարհն ու կարակից շրջանները, իսկ երեմիայն և եզերիելի մաղգարեություններում իսսատանյան պետական կազմալրդումները նշարտենն իսսարվում են հյուսիսային : Դ. Ալիշանը վկայալիցելով անցյալում կայտնված տեղակաները Հայաստանը «Արևելք» կամ «Արևելյան ստն» կրելու վերաբերյալ և վերջումելով Հին Կտտեղրամի այլ դավազները կարակազնում է, որ Աստվածաշնչում «արևելք» են կալվում երկրամեջ արևելք ընկած բոլոր երկրները (Ալիշան, 1904, էջ 252, ծրբ. 8) :

<sup>2</sup> Գրեմական շրջանակներում եղել են Մաշուն Սնծ Մաշիտի և Հայկական լեռնաշխարհի կազմալր կեբրող Մաաիտու / Մաաիան (այժմ՝ Տաղ-Արդիմ) լեռների նուս նուսնայման առաջալիկներ, որոնցից ստավել ընգտնելի է կրկրորդը (Lichner-Haus, 1927, S. 797-798; Ինգվելան, 1947, էջ 119-132; Lipinski, 1971, p. 49-50) :

<sup>3</sup> ԱՊ, էջ 143; ՍՄԼՄ, է. 200-201; ANET, p. 88; MM, p. 96.

<sup>4</sup> Մատու, 1980, է. 136 :

<sup>5</sup> Մովսնմտյանց, 1978, էջ 76 :

ծոեք» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, ինչը մի տեսակ անուշադեպյան է մատնվել: Էպոսի «Սամասար և Բարդասար» ճյուղի առաջին մասում («Կովի Բարդասարի խալիճայի դեմ») Մովսեսը սրիկներին խորհուրդ է տալիս Բարդասարից վախելու Հայաստան հետևյալ խոսքերով՝

Փախն ք, գնացի ք Հայոց բազավորի բարսը:

Գիշեր սքայծառ աստղն քմեք նշան,

Տիրեկն էլ նարպուցն ք

Արևելից բազավորի էրկիր՝:

Հայաստանը մեր էպոսում կոչվում է «Արևելքի բազավորի երկիր», մի քննադրում, որը կարող էր ծագել ու պատկանված լինել միայն և միայն հնագույն ժամանակներից՝:

Ի մի քերեղով յամերս-արադական, խերական, հինկրոսյական (աստվածաշնչյան) և հայկական տարբերակների տվյալները տեսնում ենք, որ Հայաստանը հնագույն ժամանակներում պատկերացվել է իբրև արևի քնակորթյան փայր, հանգստության, արևի ելքի (արևելքի) և ճուտքի երկիր՝

Արքուն անենք մի ներաղություն: Ինչպես տեստեր Հին Կասկարանի կարեղագույն դավազներում (Եղեմ, Գրմեղեղ և այլն), Հայաստանը հասնոյն է գալիս իբրև «արևեկը»: Ելնեղով դրամից՝ չի՞ կարելի, արդյոք, ենթադրել, որ Նոր Կասկարանում ևս կիշատակվող «ժողովրդն արևեկից», որոնք առաջինը եկան աղբյուրնու Հիտտու Բրիտանի մեամը, Հայաստանի քրմերն էին, և առաջինը աղբյուրնու միատիկական ինչ-որ խորկարով չի՞ կապվում, արդյոք, քրիստոնեությունը պետականորեն առաջին անգամ Հայաստանում ընդունվելու հետ...

## ԿԱՏԱՌՆ, ԱՍՏՎԱՆՆԵՐԻ

Առաջին քամնում նշվեց, որ հին միջագետքյան սեպագիր աղբյուրների թուրքինակ հանրագիտության համդիտացող Բիքուտտի (Ք.ա. 4-3-րդ դդ.) «Բարեխմիկա» եռանասուր աշխատություն մեզ Հայաստանը ներկայանում է իբրև աստվածների քնակալայր: Եվ այդ տեղեկությունն իր տեսակի մեզ եզակի չէ:

Միջագետքյան «Գիլգամեշ» էպոսի համաձայն, Գրմեղեղից հետո մեծ աստվածները ժողովի հավարվեցին փրկության լուսն փառ և փրկված հե-

Սասունցի Դավիթ, 1939, էջ 27, 1981, էջ 21: Նոր համաձայնեց քննարկում այս համոխանք քերվում է ոչ նախան տարբերությանը (Սասունցի Դավիթ, 1993, էջ 35): Դիլչազըսով է, որ Լարսոցնա դարի նրկում Թադեոս առաքյալի եղեօխայից դեղի կրոնիս՝ Հայաստանի խորքեղ բարոնելու գնացը ներկայաղվում է աղբյուրն «Եվ նա էլավ գնաց զխի Արևեկ» բարոնելու Բրիտանի Ավետարանից (Լարսոցնա, 1868, էջ 46; հմմտ. Պետրոսյան, 1990, էջ 7): Բնագրի հին ասորական տարբերակի համաձայն՝ Թադեոսը Եղեօխայից ահեղ է Ետեր (Պետրոսյան, 1990, էջ 7), որը եղեօխայից կրոնիս էր գտնվում: Տվյալ քննարկում Հայաստանի հանդիս գալիս իբրև «Արևեկ», քերեկ, հնագույն յրթանից եկող կիշողության արտահայտություն է:



յութն անմահս բուն շնորհեցին «աստվածների կաճատում»<sup>1</sup>։ Միջագետքյան ավանդույթունը չբնեղելից փրկարյունն ու մարմարկության սկզբնավորումը կապում է Հայկական լեռնաշխարհի հետ (տե՛ս «Երբ չբնեղեք սրբեց ամեն քան» քանոն 6), ոտտի և այնտեղ պետք է գտնվի «աստվածների կաճատը»։ Այնտեղ մեծ աստվածների ժողովի հավաքվելով վճռեց են կարևորագույն հարցեր, պտնցեց էր մարդկությանը վերապրելու իրավունքի շնորհումը։

Աստվածների «ժողովի լեռան» մասին նիշողություն է պահպանվել Աստվածաշնչի Մաալու մարգարեության Բարեկոնի բազմավորված վերաբերյալ հատվածում. «Կու պտիղ մեզ ատում էիր, «Երկինց պիտի քարծրանամ ու իմ արտու Աստուս աստղերից վեր պիտի քարծրանեն, և պիտի քնակվեն ժողովի լեռան վրա՝ հյոսիսի կողմերում, ամպերի քարծրության վրա պիտի քարծրանան, Բարձրյալին պիտի նմանվեն...» (14, 13-14)։ Աստու գտար հյոսիսում է նիշատակում մահ Հին Կտակարանի պարսկահուն գրքերիս մեկը՝ Ենթի 1 գլխք (25, 3-5)<sup>2</sup>։ Աստու քնակավայրի հյոսիսում գտնվելու պատկերազտում այնքան տարածված է եղել հին երրաթական իրականության մեջ, որ Մյուն լեռը Սաղմոսաց գրքում համարվել է հյոսիսում գտնվող, չնայած այն քարծրանում էր Երտապնում. «Տիր մեծ է, և յախտ օրենյալ մեր Աստու քապաղում, իր սուրբ լեռան վրա։ Ողբ երկրի ուրախությունը հյոսիսային կողմերում եղող Մյուն լեռն է, Մեծ Թագավորի քաղաքը» (47, 48, 1-2)։

Հին Միջագետքում և հին երրաթեցիների շրջանում աստվածների ժողովավայրի մասին եղած տեղեկությունները համարելի են հյոսիսայինական Ուգարիթ քաղաքից (Ք.ա. 14-13-րդ դդ.) հայտնաբերված դիցաբանական քնալքի հատրդությունների հետ։ 'Իրանց համաձայն, գիրագույն աստված Երտի քնակավայրում, որը գտնվում էր Հայաստանի լեռնեղում<sup>3</sup>՝ լստ քանանական սաթի ուշ խնրական տարրերակի՝ Արմ. Խիրատի Մալա գետի ակունքի շրջանում<sup>4</sup>՝ ժողովի և խնջույքի էին հավաքվում ուզալթրյան դիցարանի աստվածները։

Աստվածների ժողովավայրում նրանց խնջույքների մասին է անողրակարեն վկայում «Կիզամեշ» էպոսը, որի համաձայն Կիզամեշը (Մաալու լեռների հարթամարեղուց լեռն՝ Հայկական լեռնաշխարհի մտար գլուխկույ) հետևանքիսցում է Մաալուիին «աստվածների տնտեսանում», որը «անական գարեջուր է հյոսալիրում նրանց»<sup>5</sup>։ Միջագետքյան աստվածների խնջույքով են նրան մահ մարդու պարտումը, որը կատարվեց Հայկական լեռնաշխարհում (տե՛ս «Աստու պատկերով ու նմանությանը» քանոն 6)։

<sup>1</sup>ՀԱՊ, էջ 155; III, 13, c. 212; ANET, p. 93; MM, p. 109.

<sup>2</sup>Lipinski, 1971, p. 56.

<sup>3</sup>Lipinski, 1971, p. 41-57.

<sup>4</sup>El. Aschert and Storm-god (tr. A. Goetze), ANET, p. 519; ԴՄԻ, c. 167-169; Lipinski, 1971, p. 56.

<sup>5</sup>ՀԱՊ, էջ 146; III, 13, c. 204; ANET, p. 89; MM, p. 99.

Աստվածների ժողովատեղ լինելուց բացի, հնագույն առաջափորտական հավատալիքներում Հայկական լեռնաշխարհը համարվել է նաև աստվածին աստվածների բնակավայրը կամ կապվել նրանց պաշտամունքի հետ: Լեռնաշխարհի հետ են կապվել միջազնադրյան մեծ աստված Հայա-Էնկիի և նրա որդի Դոմոզիի պաշտամունքը, որոնց մասին կխոսվի աստվածին: Ըստ խոսիակաև դիցաբանության Հայկական լեռնաշխարհի հայազուն էին գտնվում միայնակ հասցրյալ ճրկու գերագույն աստվածների կացարան-պաշտամունքային կենտրոնները, Կամարիիցը Ուրեկիում (Մաշու-Մասիան լեռների շրջանում) և Քեչուրիիցը Կումանու (Մեծ Հայքի Կողովաց աշխարհի տարածքում)<sup>1</sup>: Հայոց լեռնաշխարհի մի շարք ժողովուրդների ափանդազրույցներում համարվել է Արև աստու բնակատեղին, որոնց անդրապարձանք նախույթ բաժնում:

Հայկական լեռնաշխարհի աստվածաբնակ տարածք լինելու մասին սրատկերացումը չէր կաշտո գոյություն ունենալ Առաջափոր Ասիայի բազմաթիվ ժողովուրդների մոտ, ասանց նրա տեղաբնիկների շրջանում յայն տարածում ունենալու: Եվ որքան էլ քրիստոնեության մուտքը Հայաստան տղեկզվեց նախաքրիստոնեականի պնչագմամք, այսուհանդերձ, վաղ միջնադարի հայ ճատենազրության Էջկյում պահպանվեցին նմանաբնույթ ուրբակի և անուրդակի տեղեկություններ: Ինչպես այդեն նշել ենք, լատ Փափատու Բուզանդի՝ Բարձր Հայքի Մեծ լեռը հայտնի է եղել իբրև աստվածների տեղ<sup>2</sup>: Իսկ Բարձր Հայքն «Աշխարհագրյում» քննութագրվում է որպես «աշխարհի գագար»<sup>3</sup>: Նույն աղբյուրը «աշխարհի գագար» պատվատխաղոտով է նկյում Բարձր Հայքի հարևանությամբ բարձրագույն Բյուրակնի Մերձանց (Մրձանց) լեռը<sup>4</sup>, իսկ Բյուրակնի լեռնեղում, լատ մինչև մեք ժամանակները պահպանված հայկական ափանդազրույցների, գտնվել է երկրային դրախտը (տե՛ս «Աստու պատկերով ու նմանությամբ» բաժնում):

Ի մի բերելով աստիճն բաժիններում ասվածը՝ տեսնում ենք, որ շտմա-արարական, բարեխնրան, ուգարիքյան, քանանական, խառիական, լեբրական, հին եբրայական (աստվածաշնչյան) և հին հայկական աշխարհընկալումներում Հայաստանի վաղմջական ժամանակներից ի վեր ներկայացել է իբրև արարչագործության կենտրոն, աստվածաբնակ երկիր, աստվածների ժողովատեղ, կաճառ, ուր նրանք հավաքվել են և՛ կարևորագույն խնդիրների լուծելու, և՛ խնչույքների...

<sup>1</sup>ՄԿԵ, Ե. 125-140; Хачатур М.Л., Кюмрук, МНМ, т. 2, с. 28; Hhaou B.B., Touyt, МНМ, т. 2, с. 505:

<sup>2</sup>Փատոտի Բիզանդացույ, 1912, էջ 327:

<sup>3</sup>Երեմյան, 1963, էջ 106; Անանիա Շիրակացի, 1979, էջ 291:

<sup>4</sup>Երեմյան, 1963, էջ 107-108; Անանիա Շիրակացի, 1979, էջ 293:

61858  
A 85879

ՈՍԿԵՐԵՐ ԵՐԿԻՐԸ ՀԱՐԱԼԻ

Հին միջագետքյան գրավոր աղբյուրներում աշագրավ տեղեկություններ են պահպանվել Հարալի (տարբերակներ՝ Արալի, Արալու, Խարալի) երկրի մասին: Դրանց համաձայն, այն ներկայանում է երեք կերպերով.

- ա) աստվածների բնակավայր՝ նախքան մարտի արարումը, քաղաքակրթության բնօրրան,
- բ) անդրաշխարհ,
- գ) իրական մի երկիր, որի հարստությունը ունկնդրվում էր

Հարալին վերաբերող բոլոր վկայությունների բննորոշմից պարզ է դառնում, որ այն եղել է իրական-պատմական մի երկիր՝ վկայված մինչև Ք.ա. 7-րդ դարը, որի հետ կապված հնագույն արտեղեյրագումները առասպելականագրերի վերաբերյալ են այն նախ ներկայացնելով իբրև աստվածների բնակատեղի, ապա անդրաշխարհ: Բարեբախտաբար, մեզ հասած գրավոր աղբյուրները և ստեղծագործությունները հնարավոր է պարզել այդ նկիրական ու ասեղծվածային, բայց և իրական երկրի տեղը:


Խնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունի չու միական «Լեֆլի և Նիխիտարազ» վերաբերյալ Ք.ա. 20-18-րդ դարերում թվագրվող լուծմիջարկությունը, որը կարելի է կոչել «Գաղթ Թիլմանի առևտրի»:

Վերաբերյալ մեզ հետաքրքրող հատվածի համաձայն՝ Հարալից ունկնդրվում էր ասարվան Թիլման՝ Տազգիչ կլկլի միջոցով: Պատմական Թիլմանը գտնվել է Պարսից ծոցի Բահրեյնյան կղզիներում (տե՛ս «Շուսերական դրախտի ասեղծվածք» բաժնում): Տազգիչի վերաբերյալ ևս ունենք թագնաթիվ տեղեկություններ՝ Սարգան Աշուրագին (Ք.ա. 19-րդ դ.) Տազգիչը հիշատակում է Լուլուրի (Մորթի լճից հարավ) և Սուրիլ-Սուրարուս (հետագայի Արև-Շարբիան՝ Հայկական շեռնաշխարհի) հարավ-արևմուտքում և Սիթագեղեցի կյուսիում) երկրների միջև: Լուլուրիի հարևանությամբ է հիշվում Տազգիչի նաև Խերական տեղության մայրաքաղաքից գտնված խոտիերեն մի քնագրում (Էլամ-Լուլուրի-Տազգիչ հերթականությամբ, Էլամը երկիր է Իրանական տարածաիրի հարավ-արևմուտքում): Բարեբախտ նշանավոր արքա Համմուրաբի (Ք.ա. 18-րդ դ.) արձանագրություններից մեկում այն վկայված է Էլամից, Գուտխումից (Կուտխում՝ Մեծ Հայքի Կուրդագ աշխարհի տարածքում) և Սուրիլից հետո: Իսկ հին աշուրական Տանի-Ալազ I (Ք.ա. 19-18-րդ դդ.) արքան Տազգիչը հիշատակում է Վեդին երկրի հարևանությամբ՝ վերջինս գտնվել է Սիխառի ու Տիգրիսի վերին հոսանքի շրջանում՝ Հայկական լեռնաշխարհում (որպես հեղինակների կարծիքով, այն պետք է նույնացնել Բարձր Հայքի հետ): Այս տեղեկա-

Հարալի երկրին վերաբերող հիշատակությունների մասին տե՛ս Komroczy, 1972, p. 113-123; AD, vol. I, part II, 1968, p. 226-227:

Մեկի և Նինուսից. a Paradise Myth (տե՛ս S.N.Kramer), ANET, p. 37-41; ETCSL, I.3.1. Ընդմիջարկության ստեղծագործությունը տե՛ս Komroczy, 1976, c. 5-36:

Մեկուսում, 1976, c. 12-13, արտ. 26-36 (և եղված գտնականությունը):



յունների անփոփոխից ակնհայտ է, որ Տուզքիչի տարածվել է Հայկական լեռնաշխարհի ամենագն հարավում՝ Լույսերում: Գառախամի և Սուրիի հարևանությամբ<sup>1</sup> (տե՛ս բարոնեզ 1): Ռուսի և Հարալին պետք է փնտրել Բաղիբեյան կղզիներից Հայկական լեռնաշխարհի հարավ ձգվող գծի շարունակության ոլորտում, ինչ՝ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական կամ հյուսիսային շրջաններում: Այս եզրահանգումը հաստատվում է մեկ այլ փաստով ևս: Հին աշխարհում հաճախ յուրօրինակ ապաստաններ ստանում էին արտադրող երկրի անունը: Սուրաբուտից Միջագետք առաքվող դոնեթի մի տեսակը կոչվում է «Հարալի»<sup>2</sup>, ինչը, եթե համադրենք մի կողմից Սուրաբուտ-Տուզքիչ սահմանակցության, մյուս կողմից Հարալիի և Տուզքիչի ծավալական հարևանության փաստերին, կառանա՞ք Հարալիի և Սուրաբուտի տարածքային համընկնում կամ մոտիկություն, թեպետ չի բացատրվում, որ այստեղ գործ ունենք Հարալիից Սուրաբուտի միջոցով Միջագետք առաքվող դրան տեսակի հետ: Այս դեպքում Հարալին պետք է փնտրել Սուրաբուտից հյուսիս՝ կրկին Հայկական լեռնաշխարհում:

Անփոփոխվող այս համառոտ տեղագրական վերլուծությունը արժանագրենք, որ Հարալին գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և հենց տեղանունն իսկ շատ հարագատ է հայաստանյան միջավայրին՝ երկրամասն (այլի վերջավորությունը (մաև հետագա -ալի տարբերակով) լայն տարածում ունի լեռնաշխարհի տեղանուններում (Արամալի, Այալի, Մանանալի, Գալաանալի, Մարալի և այլն): Ց՞ն ալիլի ճշգրիտ Հայկական լեռնաշխարհի ո՞ր մասում է գտնվել Հարալին, դժվար է ասել: Մի նախորդ աշխատանքներից մեկում ներառվել էինք, որ այն կարող է տեղայնացվել Հայկական Տավրոսի լեռներում (Արդ և Օրդ) գյուղերի կամ Գուրդնուսի հիպատակած Արանի կայանի շրջանում) կամ, գուցե, Վանա լճից արևելք՝ Արալեզք (Լեզք) գյուղի ու դաշտի տարածքում<sup>3</sup>: Չի բացառվում մաև Հարալի տեղանվան նույնությունը Հարք գավառանվան հետ, որի դեպքում կարելի է կապ տեսնել հայոց անվանալիք մախնի, դյուցազն Հայկի կիննած առաջին և ի պատիվ հայրերի (ինչ՝ աստվածների<sup>4</sup>) անվանակոչած Հարք գավառի<sup>5</sup> ու աստվածների քնակավայր Հարալի երկրի միջև: Նշված բոլոր ներառություններն, ինչ խոսք, կարիք ունեն հետագա հանգամանալի հիմնավորման ներկայումս որոշակի է միայն Հարալիի՝ Հայկական լեռնաշխարհում գտնված լինելը:

Հարալիի վերաբերյալ հատուկ ուսումնասիրության հեղինակ Գ. Կոմորոցին այդ իրական երկրի առասպելականացումը բացատրում է երկու կեննական սղատճառներով՝ Եռմեթից ու Արալից տնեցած մեծ հեռավորության և ուկու հանրելով նայտստ լինելու: Վերջինս, բառ նրա, նույնալիս առասպելականացման է հասցրել Լուրիա երկիրը եզիպտացիների

<sup>1</sup>Տուզքիչի տեղադրության վերաբերյալ տե՛ս Բորբոխյան, 1993, էջ 80-83:

<sup>2</sup>Komoroczy, 1972, p. 118; AD, vol. 6, 1956, p. 89.

<sup>3</sup>Մովսիսյան, 1992, էջ 43-44:

<sup>4</sup>Մովսիսի Կարենացու, 1913, էջ 33:

պատկերացումներում, «ազնիվ ոսկի» անցող եվիլիան Հին Կտակարանում և այլն<sup>1</sup> : Մեր կողմից ավելացնենք երրորդ զգեստը պատճառը այն, որ եին միջագետքյան պատկերացումներում Հայկական լեռնաշխարհը ներկայացել է իբրև աստվածաբնակ, սրբազան տաքածք, որի վերաբերյալ փաստերի արդեն հանդիպել ենք և դեռ կհանդիպենք:

Իսկ պատարանվ՛ել է այդ երկրի մասին որևէ հիշողություն հայոց մեջ:

Մի կողմ բողմելով Հաբալի-Հարք նույնության վերաբերյալ մեր ենթադրությունը՝ տեսնում ենք, որ հայոց դիցաբանական պատկերացումներում ասկա են նման հիշողության հետքեր: Հայոց հին հավատքի համաձայն՝ մարտադաշտում զոհված հերոսներին հայտնություն էին տալիս «նարալեզ» («այարալեզ») կամ «արալեզ» կոչվող դիցաբանական Լուկները<sup>2</sup> : Նեոս եուրոտագլոտոթյան հայր համարվող Ա. Հ. Մելյոս «արալեզ» անվան հիմքը կապում էր հին արևելյան աղբյուրներից հայտնի անդաշխարհի՝ Արալիի (Հաբալիի) հետ՝ վերջավորություն համարելով՝ եզ մասնիկը: Երբ հետ նամաձայնելով՝ Գր. Ղափանցյանը ցույց տվեց այդ մասնիկի ավարտությունը հայերենի մի շարք կենդանական անվանումներում (խելզ, քզեզ, լորեզ և այլն. նարալեզները ևս կենդանակերպ էին)<sup>3</sup> : Հետագայում այս բացատրությունն ընդունեցին արդէլ զետեմկաններ ևս:

Մյայլիսով, տեսնում ենք, որ հին առաջավորասիական պատկերացումներում իբրև աստվածաբնակ ու սրբազան երկիր, իսկ նետագայում (կապված, քերև, աստվածների սերնդափոխության գաղափարընկալման հետ) մաև անդրաշխարհի ներկայացող Հաբալին իբրևական, պատճառական մի տարածք է Հայկական լեռնաշխարհում: «Անթրինիս քնակիչների դիցաբանության մեջ պատկանվել է նրա մասին հիշողությունը՝ անգամ քրիստոնեության ընդունումից տասնամյակներ հետո. հայտնի է, որ Մուշեղ Մամիկոնյանի ղեմ նրա նայութատեղերը դրել էին աշտարակի վրա՝ հավատալով նարալեզների հաղթություն տալու շնորհիվ»<sup>4</sup>...

### «ԱՍՏՈՐ ՊԱՏԿԵՐՈՎ ՈՒ ՆՄԱՆՈՒԹՅԱՍԻ»...

Աստվածաշնչյան պատմության նամաձայն՝ արաբության վեցերորդ օրն Աստված արաբեց մայրամ երկրի հույից (կամից) իր սրտակերպ ու

<sup>1</sup> Komoroczy, 1972, էջ 121-122: Հետաքրքիր է, որ հայոց մեջ ոսկերեն են համարվել դրախտային Տիգրիսի ու Եփրատի ակունքները: Ըստ Գ. Արվանդտանցի գրությունների՝ Տիգրիսի ակունքներում «ամենայն ինչ ոսկերեն է: Արևում ճառագայթ ոսկեփայլ: Թեթ թույնոց ոսկեգույն: Զայն եզոց հավայ Դ ձայն ոսկեխոք քնարի: Ծողուք խոտոց և քոտոց ոսկի: Ուղիսք ամենայն և ամենորք ծաղկափյուն, սերուն ոսկե, տեխին ոսկի»... (Արվանդտանց, 1978, էջ 392): Իսկ Արմ. Եփրատը սկիզբ է առնում Ռակեանց լեռից:

<sup>2</sup> Արալեզների մասին հայ մատենագրության հաղորդումները՝ մանրամասն ընկերայնոր՝ տե՛ս Մատիկեան, 1930, էջ 107-170: Ղափանցյան, 1944, էջ 28-34:

<sup>3</sup> Ղափանցյան, 1944, էջ 10-12, 30-31:

<sup>4</sup> Պալատու Բուզանց, 1968, էջ 276:

մնամոքյամբ (Մենդոզ, 1, 26-28; 2, 7): Գլանով ավարտվեց արարողությունը: Աստված «արևելքի կողմում» անկեց դրախտը Եդենը, ուր և բնակեցրեց մարդկության ստեղծիչներին: Եդենից բխում էր մեծ գետ, որը բաժանվում էր յոթ գետերի՝ Փրատն, Գեհոն, Տիգրիս, Եփրատ: Առաջին երկու գետերն ենթադրաբար հոսում չորս կողմերը չեն դադարում, մինչդեռ Տիգրիսն ու Եփրատի ակունքների Հայաստանում գտնվելը բազմաթիվ գիտնականների կիսը է ավել Եդենը Հայկական լեռնաշխարհում տեղայնացնելու՝: Այդ մասին է վկայում նաև Եդենի տեղագրությունը «արևելքի կողմում», որի վերաբերյալ արդեն խոսվել է «Արևի երկիր» բառմամբ: Ավելացնենք, որ Աստվածաշնչում դախառը ներկայանում է որպես «Աստուտ սարը լեռ» (Եզեկիկ, 28, 13-14), ինչից կարելի է եզրակացնել Եդենի լեռնային վայր լինելը:

Եդենի կարևոր բնութագրիչներից մեկը մայր գետն է, որը բաժանվելով ճյուղերի՝ սուզում է դախառն ու շրջակա երկրները: Մայր գետի մասին պատկերացումները վկայված են նաև Հիմ Կատակաբանից ավելի վաղ գրի առնված ազբյարեններում: Ուզարիի (կյուս. Սիդիս) Կ, ա. 14-13-յո դարերում բվազրվող բնագրիում գերազույն Աստված Խալե կացաբանը, որն ուզարիյան հալատաշիրների համաձայն՝ ելել է ոչ միայն գերազույն առաժնե բնակատեղին և աստվածների ժողովի վայրը, այլև աշխարհաբարման կենտրոնը<sup>1</sup>, նկարագրվում է մեծ Գետի ակունքներում (ինչը համահունչ է աստվածաշնչյան պատկերացումներին):

«Գիլգամեշ» Եդուի արքայական ստորերգված ցրենդիլից վերված հեթանոսական ստեղծման անձնատրյուն շնորհիվ՝ բնակեցնում են «գետերի քեթանի մոտ»<sup>2</sup>: Այստեղ «գետերի քեթանը» նույնիմաստ է «գետերի ակունք» նկատմամբ, ըստի որ նմացույց միջազգային պատկերացումների համաձայն, գետերը (այլ թվում՝ Եփրատը, Տիգրիսը, նրանց ակունքը) բխում էին համաշխարհային ստորերկրյա օվկիանոսից, և այնտեղից երկիր այրատառտելու տեղի գետաբերում էր ստորերկրի ու ակունք երկրի համար<sup>3</sup>: Նույն աղբյուրը ներկայացնում է փրկված հեթանոսական բնակավայրը՝ անձնատրյան երկիրը, որը Եփրատի վերին հոսանքի շրջանում էր, Մաշու (Մապիուս, Մասիան) լեռներից կյուսիս<sup>4</sup>, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում: Ուշագրավ է, որ ցրենդիլի մասին պատմող շոմերական բնագրում փրկված հեթանոսական ստեղծմանը բնակեցնում են Թվման (Գիլգամեշ) երկրում, «որտեղից ծագում է արևը»<sup>5</sup>: Արևի կացաբանի, ծագման ու մայրամուտի

<sup>1</sup>Եդենի՝ Հայաստանում գտնված լինելու վերաբերյալ մինչև մեր դարասկիզբը եղած տեսակետների քննարկումը տես Իճճինյան, 1835, էջ 244-271; Ավրյան, 1904, էջ 1-16, 249-254:

<sup>2</sup>Lipinski E., 1971, p. 41-57; Ուզար, 1987, c. 56, 85.

<sup>3</sup>ՀԱՊ, էջ 161; III LIB, c. 217; ANET, p. 95; MM, p. 116. ՀԱՊ-ում նշված է «գետաքեթանի մոտ», ինչը նկատ չէ. «գետը է ծնի «գետերի քեթանի» մոտ»:

<sup>4</sup>Հճճ. Lipinski, 1971, p. 51.

<sup>5</sup>ՀԱՊ, էջ 143-144; III LIB, c. 200-202; ANET, p. 88-89; MM, p. 97-98.

<sup>6</sup>The Deluge (tr. S.N.Kramer), ANET, p. 44; Крәмер, 1965, c. 180; ETCSL, I.7.4.

տեղի վերաբերյալ պատկերացումներին այդքան անդադարծել ենք, իսկ թիվանքի շումերական դրսիտի մասին խոսք կլինի հաջորդ բաժնում: Այստեղ միայն արձանագրենք, որ բրեժեղեղի պատմության շումերական և արևարական տարբերակներում վերջիոյ ենթասոյ բնակչության է հաստատու՝ ոչնչացում՝ զեռի ակունքի կամ զեռաբերանի մոտ, որն անճանաչության երկիրն էր (վերջինիս մասին մանրամասն տես «Անճանաչության սրտն ճանաչում» Հայոց երկրի ճանաչարար» բաժնում):

Մարցոս արարածն և աշխարհում նրա կոչման սրտններ ենք գտնում միջագետքյան մի շարք բնագրերում (զրի ասոված Հին Կառկարանից դարեր առաջ), որոնցից առանձնապես նշելի են շումերական «ԷՆԿԻ և Լինճախ»<sup>1</sup> և արալական «Արախախախ»<sup>2</sup> վիպաքերը: Միջագետքյան ավանդույթյան համաձայն, մարցոս արարածից առաջ աստվածներն իրենք էին կատարում երկրային աշխատանքները: Ըստ շումերական «ԷՆԿԻ և Լինճախ» վիպաքի՝ դա տեղի էր ունենում Հարախի երկրում: Դժվարությամբ երբ ՝ ձախարհույրյալ ներքով լի աշխատանքից ազատվելու նպատակով աստվածները ժողով են գումարում և խնդրան մայր դիցալուսն՝ ստեղծել մարդկային ցեղը, որը կաշխատեք ու կազատեք աստվածներին հողսից: Լինճախ աստվածուհին համաձայնում է և աստվածներից ինստանագայնի՝ Հայա-ԷՆԿԻի հետ ձեռնամուխ լինում մարցոս արարածից: Սրկտ աստվածները կամից ստեղծում են մարցոս և «կյանքի շուն»՝ հարդրանքն նրան: Մարցոս՝ կամից կերտվելով ՝ «կյանքի շուն» ստանալով ստեղծվելու մատիվը հետագայում արտագուվել է մախատեղծ Ադամի սրտանության մեջ և տարածում գտել իմ երրայական, քրիստոնեական ու մանիքական կրոնական պատկերացումներում: Ուշագրավ է, որ շումերական ավանդազրույր վերծում է յուրովի մեկնարանել մարդկանց արատավոր Եհանկների ծաղու մը: Եշված վիպաքի նամաձայն՝ մարցոս արարածից ետոտ աստվածները հավարվում են խնդույրի՝ նշելու նոր ստեղծագործության մեռումը, որի մամանակ հայքում արարչագործ աստվածները կրկին վերծում են մարդ ստեղծել: Հարքածության սրտնատով ձախողվելով նրանք ստեղծում են անկատար Եակներ՝ չճննդաբերող կին, անտո մարդ և այլ արատներով մարդկանց տեսակներ: Այսինքն ի մնն արատավորությունը իմ միջագետքյան աշխարհընկալումներում նամարվում էր արարչագործության մեջ աստվածային սխալի արդյունք: Մարդկանց գույզելով ստեղծելով աստվածները սանճամում են նրանց ճակատագրը, որ այր ու կին սայստեկտ հավիտյանս՝ սպլոնն միաին, շարունակվի մարդկային ցեղը, որի կույունն է մշակել հողը, գրտովել անամամարտությանը և այլ աշխատանքներով, ստացված բարիքների գոմարելու բյանք կերակրել աստվածներին, կտուցել նրանց պաշտամունքի տամարներ և երկրորակել հա-

<sup>1</sup>ETCSL. 1.1.2.

<sup>2</sup>Atrahasis (tr. E.A.Speiser, A.K.Grayson), ANET, p. 104-106, 512-514; MM (tr. St. Dalley), p. 1-38: "Korea sori, uolozno kladno. ." (Сказание об Атрахасисе), ЯОТСС, с. 51-75 (пер. В.К.Афанасьева).

վատարձորեն. մարդը մահկանացու է. իսկ նրա գործն՝ անցույթ (նշված գաղտնիքների բազմիցս պատահալաված են նաև Հին Կտակարանի գրքերում):

Միջագեղորյան արարչավայրի տեղը գտնելը մեծ ղեկավարություն չի նախատեսում. բանի որ մեզ արդեն հայտնի է Հայրալի երկրի տեղը (Հայկական լեռնաշխարհ), ուր բնակվում էին աստվածները մարդու պատրուկից սուսպ (տես «Մակեդոնի երկիրը Հայրալի» բաժնում): Բացի այդ, հայտնի է նաև աստվածների ժողովի վայրն՝ ըստ միջագեղորյան (ինչպես և ազարիթյան ու աստվածաշնչյան) հավատալիքների, որը նույնպես գտնվել է Հայաստանի լեռներում:

Հատկանշական է, որ դրախտի պատկերները՝ կապված երկու մեծ գետերի (Եփրատի ու Տիգրիսի) լեռնային ակունքի հետ, հանդիպում է ինչպես միջագեղորյան, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի և հյուսիսային Կովկասի հնագիտական հուշարձաններում<sup>7</sup>. ինչը ևս հավաստում է նշված տարածքների հնագույն պատկերացումներում դրախտի մեր լեռնաշխարհում ներկայանալը:

Հատկանշալիորեն, Հայաստանի արարչագործության կենտրոն, դրախտավայր, մայրկրության շնորհքան լինելու մասին պատկերացումները պետք է տարածված լինեին մախառապ հույ իրականության մեջ: Այդ մասին վկայություններ են պահպանվել ինչպես վաղ միջնադարյան հայ մատենագրության շրջանում, այնպես էլ ժողովրդական ավանդազրույցներում: Արդեն անդրադարձել ենք «Աշխարհացոյցում» Բարձր Հայքին տրված բնորոշմանը. «...բարձր է ոչ միայն Մեծ Հայքի մնացած մասերից, այլև ողջ աշխարհից, այդ պատճառով էլ նրան աշխարհի գագաթ են կոչել: Նա գետեր է արձակում աշխարհի չորս կողմերը. (Բարձր Հայքից) սկիզբ են առնում չորս խոշոր գետեր»<sup>8</sup>. ...Իսկ Բարձր Հայքի Մեծ լեռը, Փավստոս Բուզանդի վկայությամբ, համարվել է «աստվածների տեղ»<sup>9</sup>: Բացի աստվածարձակ և աշխարհում բարձրագույնը լինելը, հատկանշական է Բարձր Հայքի՝ աշխարհի չորս կողմերը (չորս) գետեր արձակելը, ինչը նույնամուտ է դրախտի մասին անաբալդիասիական և, հատկապես, աստվածաշնչյան (Լեդեմից բխող չորս գետերը) պատկերացումներին: Բարձր Հայքի հարևանությամբ ձգվող Բյուրակնի (Բինգյոլի) լեռնազանգվածը մինչև մեր ժամանակները պահպանված հայկական ավանդազրույցներում համարվել է աստվածաստեղծ դրախտավայր<sup>10</sup>, իսկ Բյուրակնի գլխավոր գագաթ Մերմանց (Մրմանց) լեռը «Աշխարհացոյցում» (ինչպես Բարձր Հայքը) կրել է «աշխարհի գագաթ» պատվավտխոշորը<sup>11</sup>: Աշտիշատի Կանազնի մեկամի մտտակայքում Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին ելլատակում

<sup>7</sup>Ազնոխյան, Բորիսյան, 1999, էջ 34:

<sup>8</sup>Նրեյան, 1963, էջ 106; Ամանիա Շիրակացի, 1979, էջ 291:

<sup>9</sup>Փաստոս Բուզանդացու, 1912, էջ 272:


<sup>10</sup>Ամանույան, 1969, էջ 21-22 և 422:

<sup>11</sup>Նրեյան, 1963, էջ 107-108; Ամանիա Շիրակացի, 1979, էջ 293:





Նկ. 3. Միջագետքյան կնրապուշմ' ամեպագործության պուժի պատկերումը  
(Ք. ա. 3-րդ հզ., պահպում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում)



Նկ. 4. Ուրու (Մըն) աստվածուհի Մաշու (?)  
(տոնկից ծագելու  
(Ք. ա. 3-րդ հզ.,  
կնրապուշմի հատված)

են «Հացեաց դրախտ» կոչվող վայր<sup>1</sup>, որ Գրիգոր Լուսավորիչը կատարել է հայոց զորքի մկրտությունը: Հայտնի է, որ հայ իրականության մեջ քրիստոնեության մուտքն ամենուր ուղեկցված էր նախորդ կրոնի ունչացմամբ և վերջինիս հիմքի վրա համամասն քրիստոնեականի կառուցմամբ: «Հացեաց դրախտ» անվանումն իր մեջ կապող էր արևադարձային լինել այն վայրի դրախտի մասը կազմած լինելու մասին հիշողությունը, իսկ հենց այնտեղ հայոց զորքի մկրտությունը խորհրդանշել նոր կրոնի սկիզբը:

Դրախտի Հայաստանում գտնված լինելու մասին է խոսում նաև Եղիշեն «Արաբամոց մեկնություն» աշխատության էջերում կնքելով Աստվածաշնչի մեկնության դիրքերից<sup>2</sup>:

Դեռ անցյալ դարում, ի մի բերելով Աստվածաշնչի, մատենագրական տեղեկությունների և ժողովրդական գրույցների տվյալները, Ղևոնդ Ալիշանը փորձել է սույլ դրախտի տեղագրությունը՝ հանգելով հետևյալ պատկերին: Ըստ նրա, դրախտը գտնվել է Ռաքձր Հայք նահանգի և հայրակից տարածքներում՝ նախաձուռն առհման ունենալով Հայկական Տավոսի լեռները, արևմուտքում՝ Եփրատը, հյուսիսում՝ Տայք նահանգի Պարտիզագյգիոր գավառը (գավառանվան մեջ Ալիշանը պատկերացված է համարում եղենի պարտեզի մասին հիշողությունը), արևելքում՝ անցել Ալյարարատ և Տուբրեղյան նահազմերով՝ (տե՛ս քարտեզ II-ը): Նրե այսօր էլ մեր ունեցած տվյալները տեղադրենք քարտեզին, կատանանք նույն սահմաններն այն տարածքի համար, որ հիմն առաջավորադասական պատկերացումների համաձայն, գտնվել է դրախտը, որում Առտոն պատկերվով ու մնամուրյաճը արարվել են ժողովրդության առաջնեկները...

### ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԳՐԱԽՏԻ ԱՌԵՂՄԱՍԸ

Նախորդ էջերում արձանագրեցինք, որ Հայկական լեռնաշխարհը Առաջավոր Ասիայի փողագոյն իռզևոր քնկալումներում պատկերագրվել է իբրև մի տարածք, որում ի սկզբանե բնակվել են աստվածները, ուր և աքարեղ են առաջին մարդկանց: Առաջիկա ակնարկներում մենք դեռ կտեսնենք, որ նույն պատկերացումներում Հայաստանն ընկալվել է ոչ միայն որպես մարդկության բնօրրան, այլև՝ վերածննդի երկիր (ջրհեղեղից հետո), ուր պահվում են անմահության ու իմաստության խորհուրդները: Աշխարհընկալումնային այս համատեղություն, բժում է, քն շումերական աղբյուրներում իբրև դրախտ կանդես եկող Թիլմուն (Դիլմուն) երկիրը ևս առանց երկմիտանքի պետք է տեղադրել Հայկական լեռնաշխարհում: Մակայն այդ երկիրը հիշատակվում է միջագետքյան մի շարք ոչ դիցաբանական բնույթի

<sup>1</sup>Մովսիս Խրեբնազոյ, 1913, էջ 272: Փափառու Ռուզանդ, 1968, էջ 96, 100:

<sup>2</sup>Խաչիկյան, 1992, էջ 245:

<sup>3</sup>Ալիշան, 1904, էջ 10:

բնագրերում (Ք.ա. 25-6-րդ դդ.)<sup>7</sup>, որոնց քննությանը բայց չի տալիս Թիլ-մունը Միջագետքից հյուսիս տեղադրել: Մտազգում է տարօրինակ մի իրա-վիճակ. մի կողմից Թիլմունը դրախտաձայր է, անեղծ ու սքրազան երկիր, ուր բնակվում են աստվածները, մյուս կողմից (ոչ դիցարանական բնույթի բնագրերում) այն ծավալին աստորի կենտրոն է, և արբաներն, անգամ եվա-նելով, կարկառու են դարձնում այն: Ի՞նչ անեղծված է սա, և ո՞րն է դրա լուծումը:

Ոչ դիցարանական բնույթի արձանագրությունների հիման վրա Թիլմուն-նի ամենահավանական և ընդունված տեղորոշումը Պարսից ծոցի Բահ-րեյնյան կղզիներում է<sup>8</sup>: Թիլմունի վերաբերյալ հաղորդումների հակասուր-յունը լուծելու նպատակով Փ. Քորնուոլը ժամանակին առաջադրեց մի վարկած, ըստ որի շումերական քաղաքակրթության նախակրողները բնակվել են Բահրեյնյան կղզիներում, ուստի դրանք շումերների համարել են դրախտ՝ կապված նախնիների պաշտամունքի հետ<sup>9</sup>: Սակայն միջա-գետքյան և բահրեյնյան միևնույն (ուրեշյան) մշակույթին պատկանող ի-րերի նեյտրոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններս ավելի ուշ չլրջանի և բերված են Միջագետքից<sup>10</sup>: Հետևաբար, այս տարբերակով ևս անհնար է լուծել դիցարանական Թիլմունի տեղորոշման խնդիրը: Նկա-տենք նաև, որ ոչ դիցարանական բնույթի բնագրերում Թիլմունը սովորա-բար հանդես է գալիս Մագան և Մելուխա երկրների հետ, ինչը չի հանդի-սում դիցարանական բնագրերում:

1914թ. հայտնաբերված ջրիեղելի մասին հնագույն շումերական բնա-գրի համաձայն, առիտից փրկված հերոս Չիտասողբան (սշումերական Նո-յո) աստվածների կանթով բնակեցվում է Թիլմունում, «սրտեղից ծագում է արևը»<sup>11</sup>: Այս արտահայտությունը պատճառ է դարձել, որ որոշ ուսումնա-սիրույներ Թիլմունի տեղադրին Շումերից արևելք և հասցեն են մինչև Հրեղ-կաստան<sup>12</sup>: Դա իրավացի լինել չի կարող, քանի որ, ինչպես տեսանք «Արևի երկիրը» բաժնում, շումերա-արալական պատկերացումների համաձայն արևը ծագում էր Մաշու (Մասիտա, Մասիան) լեռներից և մայրամուտին վերադառնում այնտեղ: «Գիլգամեշ» էպոսում ևս ջրիեղելից փրկված հերոսը բնակվում է Մաշու լեռներից հյուսիս: Այսինքն՝ ըստ հնագույն միջագետքյան հավատալիքների՝ Թիլմուն-դրախտը նույն ամենախորյակի երկիրն է, ուր հասնելու համար պետք էր հաղթանակել «ճանապարհի դի-սի Արատտա», իսկ վերջինս Հայաստանի տարածքում հիշատակված ա-

<sup>7</sup> Թիլմունի վերաբերող հիշատակությունների մասին տես Cornwall, 1946, p. 3f, Kramer, 1963(b), p. 112, 114, note 10 (և նրան վրեժանորշուելը); Sauer, 1984, c. 45-47, 170-175 և այլն:

<sup>8</sup> Այդ տեսակետի ձևավորման որոշ պատմության մանրամասները սկսած 1879 թվից, տես Ջ. Բիրքիի վերջնյալ աշխատության մեջ:

<sup>9</sup> Cornwall, 1946, p. 4:

<sup>10</sup> Lloyd, 1978, p. 62-64:

<sup>11</sup> The Deluge (tr. S.N.Kramer), ANET, p. 44; Kramer, 1965, c. 180; ETCSL, 1.7.4.

<sup>12</sup> Տես օրինակ՝ Kramer, 1963(b), p. 111-115:

առջին պետականությունն է: Երև ապամին ավելացնենք, որ Արատտան շունթրական դրոցազնավեղում հայտնի է «աստվածային սուրբ օրնքնների երկիր» մակիրքով, նաև համադրելի է Աստվածայնի Արատտոնի նետ՝ (որն, ինչպես և Լուենք, գտնվում էր «արևելքի կղզում»): հասկանալի կրտմես, որ շունթրների անմահության երկիր-դրախտը նախ Արատտան է կամ երկուսն էլ գտնվել են Հայկական լեռնաշխարհում:

Ստանում ենք երկու Թիլդուն հին Արատտոն Արատտոն, դիցարանական Թիլդունը Հայկական լեռնաշխարհում և պատմական (ոչ դիցարանական) Թիլդունը՝ Բահրեյնյան կղզինեղում (Ք. ա. 25-6-րդ դդ.): Երկու նույնանուն երկրների մասին տեղեկությունները միախառնվել են միջագետքյան քննադրելում, ինչն էլ դարձել է հին արևելագիտության ամենից ատեղժվածային խնդիրներից մեկի ծագման պատճառը: Իսկ կապ անհնույնում և այդ երկրներից: Երև անունների համընկնումը պատահական չէ (ինչը քիչ հավանական է), կարելի է ենթադրել Հայկական լեռնաշխարհից քննադրելում մի մասի արտագաղթը Բահրեյնյան կղզինեղ, որի այդտեղում տեղի է ունեցել նաև տեղանվան փոխադրում: Այդ կարող էր կատարվել նման արտագաղթը: Վերջին սահամանագիծը կարող է լինել Ք.ա. մոտ 2500 թվականը, քանի որ այդ ժամանակահատվածից վկայված է Բահրեյնյան կղզինեղի Թիլդունը: Հնադարի արտագաղթի ժամանակագրական առաջին նախնական սահմանը կարելի է համարել Ք. ա. 6-5-րդ հազարամյակները, երբ շունթրական քաղաքակրթության նախակրողները բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հարավային և Միջագետքի հյուսիսային շրջաններում (հնագիտություն մեջ հայտնի Հաստոնյան մշակույթի տարածաշրջանում): Ի դեպ, շունթրների համար Հայկական լեռնաշխարհի սրբազան լիները կարող էր պայմանավորված լինել նեղից նշված հանգամանքով կապված նախնիների պաշտամունքի հետ: Ժամանակագրական այսպիսի մեծ քննդրվման պայմաններում հնագիտության տվյալները քույր են տալիս ավելի որոշակիացնել հնադարի արտագաղթի ժամանակը: Տարիներ շարունակ Բահրեյնյան կղզինեղում պեղումները կրազորման Ք. Թիլդունի գտնվել է, որ այնտեղ հայտնաբերված վաղագույն շերտերը թվագրվում են Ք. ա. 28-րդ դարով: Նույն այդ ժամանակաշրջանում է սկսվել Հայկական լեռնաշխարհից երբևէ կատարված մեծագույն արտագաղթներից մեկը, ինչի արդյունքում Հայաստանի վաղբունգերսային (հայտնի է նաև Կուր-արարտյան, Ենգաղթրյան և այլ անուններով) մշակույթի կրողները հյուսիսում հասան Հյուսիսային Կովկաս, հարավում՝ Պակաստին (վերջինիս Բիրբեր-Անրակ հնավայրի անունով էլ հնագիտություն մեջ կոչվում է տարածված մշակույթը): Ամենայն հավանականությամբ, այս իրողության հետ է

<sup>1</sup>Մանգրաման տես Հավելված Ա-ում:

<sup>2</sup>М.К. Абулхасенов, Первие земледельцы Нижней Месопотамии и Элама, ИВВ, ч. 1, с. 66-75.

<sup>3</sup>Նուտ, 1984, с. 346 (ժամանակագրական արդյունք):

<sup>4</sup>Նուտ, 1987, էջ 91-94 (և նրված պատկանություն):

կտարվում մահ Բաերիչյան թիլմոնի կիսմունք: Ավելորդ չենք համարում նշել, որ Բ.ա. մոտ 28-րդ դարում Հայկական լեռնաշխարհից Միջագետքի նստավայր կատարված արտագաղթը փաստվում է մահ շումերական գրավոր աղբյուրներից (դրան կամողրաշարունակ այ առիթով):

Կա կարծիք, որ Գիլգամեշ (Թիլմոն) պետք է նույնացնել Ուրմիտ լճից ելածիս-արևմուտք գտնվող Գիլգամեշ դաշտավայրի հետ<sup>1</sup>: Նման եզրահանգումն արվել է՝ հիմք ընդունելով անունների նմանությունը, և չի բացատրվել Բ.ա. 25-6-րդ դարերի պատահական տեղեկությունների հետ հսկաստությամբ: Բացի այդ, Գիլգամեշ տեղանունը չի կիզվում վաղ շրջանի աղբյուրներում և ենթադրվում է, որ այն ծագել է միջնադարում Հայաստան ներթափած դելտիկների ցեղանունից<sup>2</sup>: Նշված հանգամանքների հաշվի առնելով քիչ հավանական ենք խամայնում Գիլգամե-Գիլգամե նույնագույնը (խառնակցան կիմզ հազար տարում տեղանվան ամփոփոխ մնալը):

### ԱՆԳՐԱՇՈՒՄԸ

Սեպագիր դպրությունը ստեղծող շումերների լեզվում *kur* բառն ունի «լեռ, երկիր, լեռնային երկիր, քչմասի երկիր, անդաշխարհ» իմաստները՝ «ձև» և «եքվիթ» բառերի խամայնությունը մասնագետներին նկնք է տվել եզրակացնելու, որ շումերական նախաստյուններից, ի տարբերություն Միջագետքի կարավի, եղել է լեռնային տաշածը, իսկ նույն տերմինի վերալեռնաստացումն իրեն «քչմասի երկիր» և «անդաշխարհ», բերև, հետագա պատմական իրարաթմությունների ազդեցության արդյունք է: Հատկանշական է, որ *kur*-ը միայն հասարակ գոյական է, այն որդյակի մի երկրի անվանում: Վերջինիս մասին տեղեկությունների ուսումնասիրությունը հետաքրքրական է հայագիտության տեսանկյունից, հատկապես, Հայաստանի մասին հնագույն պատկերացումների ամբողջացման առումով:

Կտրեմ, լստ շումերա-ագաղական տղրյունների, ցտիագանց նեռակըր մի երկիր է: Այդ երկրի տեղադրման հարցում մեզ օգնում են շումերական «Եփնուրթա աստծո սխրանքներն ու գործերը»<sup>3</sup> և «Թմաննան ու Էրիխը»<sup>4</sup> վեպրացերը: Առաջինի խամաձայն, Կուր երկրի երեշտեպ մեռագըր Ա-

<sup>1</sup>Այդ տեսակետը շատ ավել զուղայի ընթացքում մեզ է ծագանել Գևորգ Ջանույանց ՀՀԵՏՔ, հ. 2, Ե., 1988, էջ 113:

<sup>2</sup>Ենթադրում ենք, որ Հայաստանում Թիլմոն անվան կիլոպարտոնց կարող է պահպանված լինել Կարդոցի Թման (մահ. Թմնիա) և Մաիքի Թմնիա տեղանուններում: Տոփրի Թմնիալ գտնվել է Եփրատի ավիև և մտնում է Ալիյանի որդիագմած դրսիստի ամմանների մեջ, իսկ Կարդոլայ աշխարհի Թմանը Արարտու լեռան լանջի, որի հետ են կապվում համաշխարհա լին ջրիերիդի մասին մի բանի կն ամանագրությունը:

<sup>3</sup>Kramer, 1961, p. 76; B.K. Aramatsesa, Kyp. MHM, t. 2, 1992, c. 29.

<sup>4</sup>van Dijk, 1983; Kramer, 1961, p. 79-82; Kravcer, 1965, c. 206-208; ETCSL, 1.6.2.

<sup>5</sup>Kramer, 1961, p. 82-83; ETCSL, 1.3.2.

ազգ (արադ. Ասակկո) աստծու դեմ մարտնչում է միջագետքյան պատերազմի ու երկրագործության աստված Նինուրթան, թայց պարտվելով «թուլունի պեա» փախչում է: Ի վերջո, նրան հաջողվում է հարել Ասագին, որի կացարանը (անդրաշխարհ Կուրը) Տիգրիսի ակամքների շրջանն էր (Հայկական Տավրոս լեռնաշղթան): Միջագետքյան անդրաշխարհի տեղայնացումը լիովին համապատասխանում է հնագույն հայկական համարժեք ինֆատալիքներին: Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ միջագետքյան անդրաշխարհի տիրակալ Ներգալի անունը փոխարինված է Անգեղով (Թագավորաց Գ, 17,30), ինչը ցույց է տալիս վերջինիս նույն դերը կատարելը հայոց հին դիցարանում: Իսկ Անգեղի պաշտամունքի կենտրոնը՝ Անգեղ տուն գավառը գտնվում էր հենց Արևմտյան Տիգրիսի ակունքներում (Արժմիք մահանգում):

«Ինաննան ու Էրիխը» վիպաբարձու ևս ներկայացվում է միջագետքյան աստծու պաշարքն ընդդեմ Կուրի, որն այս անգամ հանդես է գալիս Էրիխ լեռան տեսքով՝: Վերջինս գտնվում է Լուլլուքի երկրում՝ Ուրմիտ լճից հարավ<sup>2</sup>, ինչը ցույց է տալիս, որ, ըստ միջագետքյան հավատալիցների, այդ շրջանը ևս մտնում էր անդրաշխարհի վերգետնյա սահմանների մեջ: «Ոսկերեք երկիրը Հարալի» րաժմում արդեն ասվել է, որ Հայկական լեռնաշխարհում գտնվող Հարալին ևս իրական պատմական տարածք լինելով՝ նախ համարվել է աստվածների բնակավայր, ապա՝ անդրաշխարհ: Այդ առումով ուշագրավ է կին միջագետքյան աշխարհընկալումներում Հայկական լեռնաշխարհի աստվածաշնչության ընկալման երկակիությունը՝ և դրական, և՛ բացասական բնորոշումներով: Ընդ որում, դրականը (աստվածների ու անմահության երկիրը, դրախտը) գտնվում էր հյուսիսում, իսկ բացասականը՝ նրանից հարավ, դրա համար էլ անմահություն որոնող հեյոսը Միջագետքից պետք է անցներ Մաշու լեռները, որն աստվածների ու մարդկանց աշխարհի սահմանագլուխն էր, հաղթահարել մտք աշխարհին ու մահվան ջրերը և նոր միայն հասնել հավիտենական երանության երկիր: Նույնպիսի դիրք ունեն մահ դրախտն ու անդրաշխարհի հայկական հավատալիցներում. Բարձր Հայրը՝ հյուսիսում, Անգեղ տունը՝ հարավում (ավելի մանրամասն տեսն ստորև):

Փոքր-ինչ շեղվելով նյութից՝ ցանկանում ենք մեկ անգամ ևս ընդգծել շումերա-արադական աղբյուրների (այդ թվում՝ անդրաշխարհ Կուրին վերաբերող) ուսումնասիրության կարևորությունը հայագիտության համար և մի քանի նկատառումներ, որոնք կարող են զարգացվել հետագայում: Ասագ (Ասակկո) աստվածը, որի կացարանը (քծա՝ արաշտամունքի գլխավոր կենտրոնը) Հայկական Տավրոսն էր, կարող էր հայաստանյան բազում այլ աստվածների նման իր անունը բաղնել Հայոց Բուն տոմարում. հայկական օրացույցի ամսվա 17-րդ օրանունն է «Ասակ»<sup>3</sup>: Հայաստանի տարբեր

<sup>1</sup>Kramer, 1961, p. 82-83; ETCSL, 1.3.2.

<sup>2</sup>Լուլլուքի մասին տես Klengel, 1966, S. 349-371:

<sup>3</sup>Անանյա Եփրակագի, 1979, էջ 257:

վայրերում պահպանվել են «ասակ» հիմքով բազմաթիվ տեղանուններ: Հնարավոր է ենթադրել նաև այս դիցանվան կապը Աստվածաշնչում Հալատանին տրված «Արամագլան» անվան հետ. ըստ Ծննդոց գրքի (10, 3), թորգոմն ու Արամագը կղբայրներ էին: Սրանց կողքին անհետաքրքիր չէ նշել, որ, ըստ Ղևոնդ Ալիշանի բեքոս վկայության, հայերը հնում կոչվել են «սակեր» (եմնու. Սկաշորդի-Հայկազն, (Ի)սկայր-հայր)<sup>1</sup>: Բայ Ասազի ծննդյան պատմությունը բազմաթիվ մանրամասներով բնագոյային նմանություններ ու համապատասխանություններ ունի Վահագնի ծննդյան հիմնի հետ (համադրու՛մը՝ Արմեն Պկտոսյանի): Կուրի հետ կարող է առնչվել Հայկական լեռնաշխարհում Վանի բազավոլտայան և ալկելի վաղ ժամանակաշրջաններում մեծ տարածում ստացած հնդեվրոպական Կուե-ուս աստծու պաշտամունքը<sup>2</sup> (քեպեա այդ մասին հրատարակված աշխատանքները չկան, նման կարծիքի են մեր գիտնականներից շատերը): Կուե-ուսն Կուստ անվամբ հիշվում է Ջենոբ Գլաքի և Հովհան Մամիկոնյանի կողմից՝ որպես Վահագն-Գիսանի և Աստղիկ-Անահիտ-Դեմետրի ավագ որդին<sup>3</sup>: Թերևս կարելի է շարունակել քեմային վերաբերող նկատառումների շարքը (որոնց մի մասը կարող է և մերժվել հետազայում), սակայն ասվածը բավարար համարելով՝ անցնենք համաշխարհային ջրհեղեղի մասին ավանդապատմունքին:

### «ԵՐԲ ԶՐՎԵՂԵՂԸ ՍՐԲԵՑ ԱՄԵՆ ԲԱՆ»...

Աշխարհակործան ջրհեղեղի մասին բազմաթիվ հիշատակումներ են պահպանվել տարբեր մայրցամաքներում ապրող ժողովուրդների ավանդազրույցներում<sup>4</sup>: Դրանց մեջ առանձնապես են մի խումբ պատմություններ, որոնք այս ժառանգին մանրամասներով առավել մոտ ու կարգված լինելով՝ գրի են առնվել հին Առաջավոր Ասիայում:

Մեծ ջրհեղեղի մասին գրի առնված նմազույն պատմությունը շոմերականն է, որը գիտական աշխարհին նայումի դարձավ 1914 թվականին<sup>5</sup>: Մինչ այդ՝ 1872 թվականին, Ջ. Սմիթը կրատարակել էր ջրհեղեղի մասին քաբեղոնյան (աքադական) պատումը՝ «Գլզգամշ» կարսի 11-րդ պնակիտը<sup>6</sup>, որն իր մանրամասներով գրեթե նույնատիպ է Աստվածաշնչի պատմության հետ: Երկու պատմությունների համաձայն էլ մարդկանց սրբազորությունը սպառում է աստվածային համբիրությունը, ինչի արդյունքում մարդկությունը դատապարտվում է կործանման՝ ջրհեղեղով: Սակայն

<sup>1</sup> Ալիշան, 1904, էջ 55-57:

<sup>2</sup> Կուեուս-Կուսոմի պաշտամունքի մասին տե՛ս Հնայական, 1990, էջ 152-166:

<sup>3</sup> Դիցանունների համարմիություն վերականգնումը տե՛ս Խաղաքյան, 1893, էջ 20-27, 54-60; եմնու. Հնայական, 1990, էջ 154-160:

<sup>4</sup> Դրանց մեծագույն մասը տե՛ս Փրեքեր, 1985, է. 63-159:

<sup>5</sup> ANET, p. 42-44; Կրաթեր, 1965, է. 175-180; ETCSL, 1.7.4.

<sup>6</sup> ՀԱՊ, էջ 155-165; III/AB, է. 211-220; ANET, p. 88-89; MM, p. 109-120.

աստվածային ամենատես տարդարադատ աչքից չեն խառախում մի քանի բարեպաշտներ, որոնք փրկվում են տասշատով հանգրվանելով լեռան կամ լեռների վրա: Ջրեղեղեի աճաբար փրկվածներն ինանում են տապա-  
նից թշուրհներ արծակելու միջոցով:

Աստվածաշնչում փրկության վայրը Արարատի լեռներն են (ՃՆճողոց, 8, 1-4), իսկ «Իկզամեչ» նախում՝ Նիմոշ (այլ ընթերցմամբ՝ Նիսիր)՝ չեղ: Հայկական լեռնաշխարհի հարավում: Որ միջազեծության և նրանից ծագող ավանդություններում Հայաստանն է հանդես գալիս որպես փրկիչ տա-  
րածք, սկնհայտ է նաև Բեյրութի (որի մասին խառվել է «Աստվածների մոտ» Հայաստան» բաժնում), Ալեքսանդր Բազմավազի, Աբյուղենոսի՝ Հիերոնիմոս Եգիպտացու, Մնասեասի, Նիկողայոս Դամասկոսցու, Հովսե-  
պոս Փրավիտի, Եվսեբոս Կեսարացու և այլոց հաղորդումներից՝: Ուշա-  
գրավ է, որ դուրանյան ցրեղեղի պատմությունը ևս (նույնպես աստղա-  
վորասխական ծագում ունեցող) Հայաստանի նախավր Ջուլի լեռն է համա-  
լում փրկության վայրը. «Նվ ջուրի նվազեց, կատարվեց Աստու դատա-  
տանը, և այն (տապանը - Ա.Մ.) կանց ատավ Ջուլի լեռան վրա» (Նորան, 11, 47): Նույն շրջանում է հանգրվանում տապալը նաև Խորենացու վիա-  
յակոչած Ուլիսիոսյորոս Փիլիսոփայի եին անգլիո գրայցներում՝: Իսկ աս-  
տրեատանյան սեպագիր աղբյուրներում Կոլվազ լեռների տարածքում  
հիշատակվում է Արարտ լեռ՝:

Ջրեղեղի մասին յոմեխական քնազրում, քերես վնաավելու սցանճա-  
տով, քազակաչում է փրկաբար տարածքի անունը: Բարեբախտաբար, այլ  
քազրությունը ենարավոր է լրացնել յոմեխական մեկ այլ քնագրի հաղորդ-  
մամբ, որում Արատուա երկրի ժողովրդին տրվում է հետևյալ քնաչառնը.

Նրանք, որ կանգնեցին ցրեղեղի մեջ,

---

Վանազարար քնառնված է տեղանվան Նիսիր (Նիցիր) ընթերցումը, սակայն ել-  
նելով որոշ փաստերի առկայությունից՝ աստջարեկնել է ալիի նախընտրելի նա-  
մարվող Նիմոշ ընթերցումը (Lambert, 1986, p. 185-186):

Վեքսանդր Բազմավազի և Աբյուղենոսի հատվածները (որոնց սկզբնաղբյուրը  
Բեյրութում է) մեզ են հասել Եվսեբոս Կեսարացու երկի միջոցով. Ալեքսանդր Բազ-  
մավազ «... և երբ տեղին յարում վայրի կեալ կային, Հայոց աշխարհին է», Աբ-  
յուղենոս «... և նաև երբեալ յաշխարհն Հայոց դարասեր, և, ի փայտեյ դեղ օգնա-  
կանութեան քնակոչաց աշխարհին պարզեեր» (տե՛ս Եսեքի Պամիլիկոսյ Կեսա-  
րացույ, 1818, էջ 18 և 25): Հիերոնիմոս Եգիպտացու («որը գրել է Փյունիկիայի  
հնախառությունը»), Մնասեասի տեղեկությունների մասին մեզ հաղորդում է Հով-  
սեպոս Փրավիտը, որը մեջբերում է նաև մի հատված Նիկողայոս Դամասկոսցու  
երկից (Հովսեպոս Փրավիտ, Հրեական հնախառություն, էջ 54-55): Ն. Դամաս-  
կոսցու հաղորդմանը կանոնադատանքը Հովելիում Բ-ում:

Նեվսեբոս Կեսարացու, Հիերոնիմոսի, Եվստասիոս Անտիոքցու, Հովհան Ռսի-  
քեանի, Թեոդորեոսի, Իսիդոր Սեիլացու, Եպիփանի մեկնաբանական երկերի  
համագատախան հատվածները՝ հղումներով տե՛ս Ինգլիզան, 1947, էջ 9-21:

Մովսիս Խորենացույ, 1913, էջ 25-26: Մովսես Խորենացի, 1981, էջ 105-106:

Վիշառակվում է Աշտրեանիթրազավ 11-ի կղզից (նաև Արարազի, Արրիկի  
աստրեանակներով), տե՛ս Առաօտոս, 1951, N 2, с. 285, 289, որոս. 12:



այն ժամանակ, երբ ջրհեղեղը սրբեց անն բան՝ ...

Արատում Հայկական լեռնաշխարհի մինչ այս հայտնի ասոցին պետություն է (վերջում Ք.ա. 28-րդ դարից), որը բն անվանը, բն տերությունն է և բն ջրհեղեղի նեո կապված ավանդությունը գազադրելի ու նույնական է Աստվածաշնչի Արարատի նեո: Արատու-Արարատը փրկելի երկիր է հանդիսանում ինչպես շունթական, այնպես էլ աստվածաշնչյան աշխարհընկալումներում: Ընդ որում, Աստվածաշնչի համաձայն՝ Արարատի լեռներում կըքվեց Աստու և մարդկության հավիտենական տխոր, որի խորհրդանշանը դարձավ միսմանը (Մենդոզ, 9, 12-13):

Դառով փրկարար տապանի հանգրվանատեղին՝ նշենք, որ բն կին եղևնակները և բն սերնդեանունը փոխանցված ավանդազգայնները մատնանշում են իրման երկու շրջան՝ Հայաստանի հարավը (Կորդվաց լեռներ) և լեռնաշխարհի կենտրոնում գտնվող Մեծ Մասիս-Արարատը: Սկզբնաղբյուրների մի խումբ էլ պարզապես նշում է, որ փրկարյան հազն իջել է Հայաստանի լեռներում առանց որոշակիացնելու տեղը: Երբն զնարում էլ վերադառնում է նեոգոյն ասոցիացիայի համար ինքնուրույն լեռնաշխարհում: Հայաստանի հանդիս գալն իրեն մարդկության վերածննդի երկիր, նոր մարդկության հայրենիք: Ջրհեղեղից հետո մարդկության վերապրումը շարունակվում է նոր պայայտագործություն էր, և ոչ պատահականորեն այն տեղի է ունենում մարդկության արարման վայրում՝ Հայկական լեռնաշխարհում: «Դաստակական չէ նաև, որ հնում մի շարք ժողովուրդների դիցա-վիպական պատկերացումներում ասոցին մարդու ծննդավայրն ու ջրհեղեղից փրկվելու տեղը համարվել են երկրի սրբուր, ուր գտնվում էր աշխարհի աստվածը, որը և աշխարհի կենտրոնն էր՝: Հենց այդպիսի մտակերպմամբ է սրահարմարվել ջրհեղեղի պատմությունը Թովմա Արծրունու մոտ: «Աստվածաշնչյան երամանը կատարվելուց հետո պեմափ ջրերը տապալել են ջրհեղեղի արևելք աշխարհի կենտրոն, և այն հստեց Կորդվաց լեռներին: Եվ նախապես գնորդան գոնեք մատուցեց Աստուին, որը խոստացավ այդու նույնը լեռնաշխարհի աշխարհին, նավիտենական ուխտ հաստատելով՝ «Ի՞նչ արելը պետք է դնեմ անպի մեք», որը ծիածանն է, որ ոմանը համարում են անպի գառված հուր, իսկ կատարչությունը պրոֆիները՝ Արամազդի գոտի»՝

Աշխարհակործան ջրհեղեղի մասին ավանդազգայններ են գրություն ունեցել նաև Ուրարտիստեանական Հայաստանում: Մի գրություն համաձայն՝ հայոց Արամազդ և բաղդեսգվող միջույան աստվածների միջև բշնամություն կար, և Արամազդը նազրելով՝ ջրախեղեղ արեց Թյուրանին՝ (տա, բերեա, Հայաստան-Միջագետքը հնագույն հարաբերությունների արտապրումն է դիցարանություն լեզվով): Մեկ այլ պատմի համաձայն՝ Միլ Կարինը երկրի պատվածքն է, որից բաղվել է ջրհեղեղը երկրի վրա և բո-

<sup>8</sup>Kramer, 1952, p. 42-43; Kauter, 1964, c. 218; Cohen, 1973, p. 140.

<sup>9</sup>Tonoyan B.H., *Illy restan*, MIM, t. 2, 1992, c. 350.

<sup>10</sup>Թովմա Արծրունի և Անանու, 1985, էջ 32-33

<sup>11</sup>Ավրան, 1904, էջ 44:

ղել իր հետքը երկնքում՝ ի տես մարդկանց՝: Հայկական ավանդությունը յուրօրինակ մի փառաբանություն-օրհներգ է Մեծ Մասիսին. փրկարար տապալանին հայոց լեռների խորհուրդ են տալիս գնալ դեպի մայր լեռը, որ մեծ ու բարձր է բոլորից՝:

Քրիստոնեության ընդունումից հետո հայկական ավանդագրությանը (որոնց մի մասը մտածվեց) միաձուլվեցին աստվածաշնչյան պատմության հետ, և ձևավորվեց մի նոր ավանդավեպ, որը դեռևս կարիք ունի համակողմանի ուսումնասիրության (տե՛ս նաև Հավելված Բ-ում):

## ԱՆՍԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ. ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻ ԵՆԱՍՊԱՐՀԸ

Աստվածաշնչի հայտնի պատմության համաձայն՝ Աստված Եղեմի կենսոյանում տնկեց կենաց, բարո և չարի իմացության ու բազմաթիվ մղբ-գատու ծառեր՝ պատվիրելով ուտել միայն ճրգատու ծառերի պտուղները: Օձի միջամտության շնորհիվ առաջնաստեղծ մարդիկ ճաշակեցին բարո և չարի իմացության ծառի արգելված պտուղը, բացվեցին նրանց աչքերն, ու աստվածների նման նրանք ճանաչեցին բարին ու չարը: Եվ զգուշանալով, որ մարդիկ կճաշակեն նաև կենաց ծառի պտուղը, կանմահանան ու կաստվածանան, Աստված փտարեց մարդկանց դրախտից և դեպի կենաց ծառը տանող ճանապարհներին պահասպան դրեց քեղուրներից ու բոցեղեն սուրբ (Ծննդոց, 2,8-3,24):

Աստվածաշնչյան ընկալմամբ՝ աստվածաշիննի ու կենդանականի միջև կա երկու խաչոք անցքայետ՝ իմաստությունն ու անմահությունը: Երկու աստվածաշին հատկանիշները խաղիքայանչող պրբազան ծառերն աճում էին դրախտում (որն արարչագործության ու աշխարհի կենտրոնն էր), որի տեղադրությունը Հայկական լեռնաշխարհում հայտնի է վաղուց: Ուստի, Հայաստանի մասին աստվածաշնչյան պատկերացումների չարքում (դրախտ, մարդկության վերածննդի երկիր, Աստու և մարդկանց հավիտենական ուխտի երկիր) պետք է ընդգծել իմաստության ու անմահության խոթանալուներ կրելը և:

Արդեն նշվել է, որ Հին Կտակարանի մի շարք սյուժեների ու պատկերացումների ակունքները կապվում են հին Միջագետքի հետ: Բացառություն չեն կազմում նաև իմաստության ու անմահության խոթանալուներին առնչվող բեմաները: Թե՛ Աստվածաշնչում և թե՛ միջագետքյան հնագույն բնագրերում մարդը եստու է վնաս միայն իմաստությանը (օժտվում բանականությամբ), քայց մնում է մահկանացու՝ միջին դիրք գրավելով աստվածա-

<sup>1</sup>Ղանանայան, 1969, էջ 7, 420:

<sup>2</sup>Ղանանայան, 1969, էջ 12, 24, 26, 54: Ուշագրավ է, որ այս սյուժեն տարածվելով ընկել է բրեհեղեթ «կոնվազյան տարրերակի» հիմքում, չուս որի տապանը նախ ըլվել է Կապրեկ լեռան կողք և երկու կեռի բաժանել նրա գաղաթը, հետո կասկ Արարատ լեռանը և դարձաք առիկ նրա վրա (Ղանանայան, 1969, էջ 61Կ):

ինի ու կենդանականի միջև: Դրանով նա, սակայն, չապարեց անմահության ձգտելուց, և հովիտենական կյանքի որոնմանը դարձավ մարդու մշտական ուղեկիցը: Հնագույն միջագետքյան ավանդության մեջ անմահության որոնող գլխավոր հերոսը Գիլգամեշն է, որի մասին ասերը զրի են ասելի կին աշխարհի քաղմաթիվ լեզուներով: Հունիական «Գիլգամեշն ու անմահության երկիր» վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղևորվել անմահության երկիր, որին հասնելու խմոր Ռիտո (Արև) աստվածը նրան տալիս է «գեալի Արատտա ճանապարհը ցույց տվող» յոթ ուղեգույցներ<sup>1</sup>: «Գիլգամեշ» էպոսի խերական տարբերակում հերոսն ընկերոջ հետ մեկնում է անմահության որոնման՝ Եփրատի հոսանքն ի վեր<sup>2</sup>: Իսկ էպոսի բարեկենդան տարբերակում Գիլգամեշը հայրապաշտում է Մաշու լեռներն ու տասներկու աստղերից ձգվող բանձր խոտիտը, ծառնում դրախտ նիշեցնող քարերի աշվին, ապա անցնում մահվան ցրեք, համոզվում օրհնելից փրկված ու անմահության առաջած ներսին, նրա շնորհիվ ձեռք է բերում «անմահության ծաղիկը», որը վկայարարի ճանապարհին նրանից զրոսնում է օձը<sup>3</sup>: Ուշագրավ է, որ Աստվածաշնչում ևս մատվկությունը մահկանացու է դառնում օձի միջամտության հետևանքով:

Գիլգամեշի հետ կապված անմահության մասին պատկերացումները Առաջավոր Ասիայում սրահանվում են քավականին երկար, անմահության որոնման սյուժեում Գիլգամեշին փոխարինում է Ալեքսանդր Մակեդոնացին: Անմահության խոսնելու համար Ալեքսանդր Մեծն, ըստ հունական վեպի (զրի առնված Ք.ա. 240թ.), քննում է «ճանապարհը դեպի Հայոց երկիր, որտեղ ակունքն է Եփրատի ու Տիգրիսի»<sup>4</sup>: Նա հասնում է կրաշք-երկր, ապա անցնում մութ աշխարհով, համոզվում օրհնյալ մեկին և հասնում կենաց աղբյուրին: Իսկ Ալեքսանդրի մասին սիրիական վեպում նրա ճանապարհին եղջվում է Մասիա լեռնաշղթան<sup>5</sup>: Փաստորեն հին արևելյան և նեղեմիտական վիպական ավանդություններում «դեպի Արատտա ճանապարհը» փոխարինվում է «դեպի Հայոց երկիր ճանապարհով», Մաշու լեռները՝ Մասիա լեռնաշղթայով, երկու դեպքում էլ հերոսը գնում է դեպի Եփրատի (ու Տիգրիսի) ակունքները, անցնում խաղաղով, դրախտ նիշեցնող վայրով, ապա մութ աշխարհով կամ մահվան ցրեքով, համոզվում աստվածընտրյալ ներսին և ստանում անմահություն: Իրականում երբևէ Հայաստան չմտած Ալեքսանդր Մակեդոնացին վիպական ավանդության մեք քննում է նրա ճանապարհը<sup>6</sup>, քանի որ հին առաջավորասիական

<sup>1</sup> III/AB, c. 131; հայերեն քաղմանությունը՝ «Գարուն», 1994, N 4, էջ 90:

<sup>2</sup> MM, p. 127, note 32.

<sup>3</sup> ԱՄՊ, էջ 163-165; III/AB, c. 218-220; ANET, p. 88-89; MM, p. 119.

<sup>4</sup> Lipinski, 1971, p. 46:

<sup>5</sup> Lehmann-Haupt, 1927, S. 797-798; Lipinski, 1971, p. 47; Тугаев, 1924, с. 262-263; Ինգլիզյան, 1947, էջ 120:

<sup>6</sup> Նշենք, որ հայկական ավանդություններում պատկանելի են և՛ Մակեդոնացու Հայաստան վայր, և՛ «մութ աշխարհով» «դուր աշխարհ» հասնելու, «անմահական ցուր» ձեռք բերելու սյուժեները («Նամակալան, 1969, էջ 279-282, 472):

հոգևոր քննադատմանը մեր երկրի հետ լին կապված դրախառայինն և անմահությանը վերաբերող պատկերացումները<sup>1</sup> :

Նախորդ էջերում անդրադարձել ենք դրախտի՝ ըստ էին աստօպո-  
րասիական մի շարք աղբյուրների՝ Հայկական լեռնաշխարհում տեղորոշ-  
վելուն: Նշվել է նաև, որ հայկական աղբյուրների համաձայն՝ դրախտը  
գտնվել է Բյուրակնի լեռների, Բարձր Հայքի ու հարակից շրջաններում:  
Այդ տարածքի հետ են կապվում անմահության մասին բազմաթիվ հայկա-  
կան ավանդազրույցներ, որոնց համաձայն Բյուրակնում էր աճում անմա-  
հության ծաղիկը (խառը) և բխում անմահության աղբյուրը: «Կրանք կենդա-  
նացնում էին մեռյալին, բուժում անույս հիվանդին, վերադարձնում էր յոթ  
տեսողությունը»: Հատկանշական է, որ հայկական հնագույն պատկերա-  
ցումներում դրախտ-անդրաշխարհ տեղայնացումը նույնն է, ինչ աստօա-  
պորասիական վերսիդյալ զրույցներում: Անմահության երկիր-դրախտը  
գտնվում էր անդրաշխարհից հյուսիս, և հարակից եկող անմահություն որո-  
նող հեղուք նախ պետք է անցներ անդրաշխարհով: Վերջինս, ըստ հայոց  
վաղմջական իսթատալիքների, գտնվել է Հայկական Տավրոսի լեռնա-  
զանգվածում, Անգեղ տուն գոլասի տարածքում: Միջագետքյան աղբյուր-  
ներում իբրև անդրաշխարհի հանդես եկող Կուրը ևս տեղայնացվում է Հայ-  
կական Տավրոսում՝ Տիգրիսի ակունքների շրջանում: Գիզգամիչը նախ  
անցնում է Մաշու (Մասի(ո)ս-Մասիոն) լեռների, որանք ձգվում են Հայկա-  
կան Տավրոսի հարավով, հաղբահարում խավար տարածությունը, դուրս  
գալիս հեղիարային քարերի այգին, ապա անցնում մահվան ջրելով և հաս-  
նում նպատակակետին<sup>2</sup>: Մաշու լեռներից հետո տասներկու ասպարեզ  
տարածվող խավարը, ինչպես զույգ է տվել Կ.Յ.Լ.Լեման-Հասպուր դեռևս  
տասնամյակներ առաջ, Տիգրիսի բնական բունելն է, որի ելքի մոտ գտնված  
աստրեստանյան սեպագիր արձանագրություններում նշվում է այդ  
տարածքի՝ Տիգրիսի ակունքն ու «արևի ելքի և արևամուտի իզուր լեռները»  
լինելը<sup>3</sup>: Բարերի այգու պատկերը հիշեցնում է Աստվածաշնչի Նզեկիելի  
մարգարեության (28, 13-14) դրախտի նկարագրությունը: Իսկ մահվան  
ջրերի ու մութ աշխարհի տարածքը նույնանում է հայոց անդրաշխարհի՝  
Անգեղ տան հետ: Այն հաղբահարելուց հետո միայն հարավից եկող

<sup>1</sup>Հանական աղբյուրներում հիշվող Այա երկիրը, որտեղ ծնվում էր արևի սրբին և պահվում Ոսկե Գեղը, մեծ համանականությանը, նույնացվում է Հայաստ-Հայքի հետ (Ճանտեյան, 1987, էջ 285; Պետրոսյան, 1997, էջ 86-89; Մարտիրոսյան, 1997, էջ 24): Այա երկրի Ոսկե Գեղը կապվում է խեթական աղբյուրներից հայտնի ճշտադարձը Էա ծառի հետ, որից կախված ոչխարի գեղըը խորհրդանշում էր բոլոր բարիքները (ՄԿԻ, Ե. 61):

<sup>2</sup>Լեմանույան, 1969, էջ 21-22, 422: Նախաբրիտանական հայ իրականության մեջ կենսա ծառի և անմահության ծաղիկ պաշտամունքի մասին կարող են վկայել մինչև 19-րդ դարի վերջերը պատկանված արևօդիների համայնքները, որոնք երկրագաղտն էին սրբե, բարիքի ու շույան ծաղիկը (Եսրաքառ, 1967, Ե. 102-112):

<sup>3</sup>ՄԿԻ, էջ 143-165; ՄՈՒԱԲ, Ե. 200-220; ANET, Բ. 88-97; MM, Բ. 96-120.

<sup>4</sup>Lehmann-Haupt, 1910, S. 430-462.

կարող էր հասնել նայոց դրախտաշխարհ Բարձր Հայք և Բյուրակն:

Այսպեսով, թե սյուժետային ժանրամասնեցի և թե աշխարհագրական տեղայնացումների քննադրյունը ցույց է տալիս, որ հնագույն ժամանակներում Առաջավոր Ասիայում ստեղծվել և ինքնինիզմի դասաչրջսանում գոյություն է ունեցել անմատոթյան մասին պատկերացումների մի խմբակային, որի համաձայն՝ նախնական կյանքի խորհուրդը պատկերվում էր Հայկական լեռնաշխարհում, ուստի և անմատոթյան տեղեւագող ներքոյին վիճակված էր անցնելու ճանապարհը դեպի Արատուս՝ Հայոց երկիր...

### ԵՐԿԻՐՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ

Միջագետքյան հնագույն քննադրերի ու Աստվածաշնչի գաղտնաբացումներին առնչակցու քյունն ակնհայտ է նաև նախասկզբնական իմաստաբան քննադրկայում: Ինչպես նշվեց, քաջաւ և չարի իմացության մասն, քստ Հին Կտակարանի, գտնվել է Եղեճում՝ Հայկական լեռնաշխարհում, որ և առաջին մայրիկ հաստ են դարձել իմաստոթյանը (ՄՆՆՅՈՅ, 3, 1-7): Այդ առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի շումերական քննադրերից մեկի հարդրումը, որն իմաստոթյան ու արվեստի ծագանը կատարում է Հայկական լեռնաշխարհի հետ. «Իմաստոթյունն ու արվեստը ցած քերվեց Աբատուսից»<sup>1</sup>:

Հին միջագետքյան դիցաբանությունը Հայոց լեռնաշխարհի հետ է կապում աստվածներից իմաստագույնի՝ արարչագործ, իմաստոթյան, համաշխարհային օվկիանոսի ու աստրերկրյա ջրերի աստված Հայա-Էնկիի պաշտամունքը: Նրա գլխավոր կացարանը գտնվում էր Արգուում, որի վերերկրյա շրջանների՝ Հայկական լեռնաշխարհում գտնված լինելու մասին խոսվել է «Արարչագործության կենտրոնը» քաճմում: Միջագետքյան նախասկզբները համաձայն՝ Արգուում էին քնակվում յոր իմաստունները, որոնց Հայա-Էնկին ուղարկեց քաղաքակրթություն տարածելու մարդկանց մեջ: Նրանցից նատկապես նայոնի է Օաննեաի պատմությունը (չնորիցվ Քերոստի գլաճամն), որը մինչ այդ կենդանիների նման ապրող Բարեզոնի ժողովուրդն սովորեցրեց գիր, գիտություններ, շինարվեստ, երկրագործություն և այլն<sup>2</sup>: Շուներական աղբյուրներում իրրև քաղաքակրթության քննութան է հանդես գալիս նաև Հարալի երկիրը (տես ն «Ուկեճեր նրկիր Հարալի» քաճմում):

Ի մի քերվող սպաճոր՝ տեսնում ենք, որ արարչագործության կենտրոն, մարդկության ծննդի ու վերապրումի վայր, դրախտ ու անդաշխարհի հանդիսացած և անմատոթյուն շնորհող մեր լեռնաշխարհն, քստ միջագետքյան պատկերացումների, եղել է նաև քաղաքակրթության քննութանը...

<sup>1</sup>Alster B., *Studies in Sumerian Proverbs*, 1975, p. 128, n. 32(գաւ Berlin, 1983, p. 22):

<sup>2</sup>MM, p. 182-183; Schabel, 1923, S. 253-256; B.K. Афанасьев, *Оантец*, МНМ, т. 2, с. 234

ԲԱՐԵՊԱՇՏ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ՝ ՍՈՒՐԻ ՕՐԻՆԱՅ ԵՐԿՐՈՒՄ.  
ՀԱՅԱ ԱՍՏՏՈՒ ՈՐԴԻՆԵՐԸ

Շուներական դյուցազնավեսում Արատտան հանդես է գալիս «աստվածային սուրբ օրհնաց երկիր» պատվամուն-մակիրով<sup>1</sup>: «Աստվածային սուրբ օրհններ» (շուներեն «մե») ասվածի տակ հասկացվում էին ոչ թե պարզապես օրհներկը, այլ այն մեծագույն սրբազան ուժերը, որոնք կառավարում էին ողջ տիեզերքը, աստվածային ու մարդկային իրականության բոլոր պարսները: Այդ իսկ պատճառով աստջարկվում է շուներեն «մե» բառը բարձրանել «Լաբյուն, լինկոբյուն»<sup>2</sup>: «Աստվածային սուրբ օրհներկ» տիրակալն, ըստ շուներա-սրբազան դիցաբանության, Հայան (Էնկին) էր՝ աստվածներից իմաստնագույնը, որի պաշտամունքն, ինչպես նշվել է, կապվում էր Հայկական լեռնաշխարհի հետ:

Միջագետքյան գրականության հազարյոթանների համաձայն՝ սրբազան մեր լեռնաշխարհում, ուր տեղի էին ունեցել աշխարհայարժան գլխավոր իրադարձությունները և պատկանում էին տիեզերք կառավարող սուրբ օրհներկները, անմահության ու իմաստության խորհուրդները, քննվում էին ոչ թե աստվածական մտկանագույններ, այլ՝ քննարկ ժողովուրդ: Այդ մասին վկայություն է պահպանել շուներական դյուցազնավեսը:

Ժողովուրդն (Արատտայի), որ ասավել է մյուս ժողովուրդներից,  
Ժողովուրդը, որին Դունսզին ընտրեց մյուս ժողովուրդներից...<sup>3</sup>

Սա «քննարկ ժողովուրդ» հասկացության բացառիկ մի կկոստություն է ոչ միայն ժամանակի փաղեմության առումով, այլ հատկապես նրանով, որ «քննարկ» է համարում ոչ թե ժողովուրդն ինքն իրեն (ինչպես եղևաններն ու ճապոնացիները), այլ՝ օտարը նրան, ընդ որում, ետևադաշտյա լինելով: Իսկ դա նշանակում է, որ մեր մախնիների աստվածը քննարկ ժամանակ պատկերասրահը գոյություն է ունեցել և ճանաչվել մեծ Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս:

Լույս սեղբնաբարդը տեղեկություն է պահպանել աստվածը քննարկ մեր մախնիների՝ սեփական ճանաչարհի գլխակցություն՝ առաքելություն ունենալու մասին, որը վկայվում է Արատտայի տիրակալի խոսքում.

Երբ պաակն Արատտայի՝  
Բարեկուր յամած<sup>4</sup> սուրբ օրհնաց երկրի,

<sup>1</sup>Շուներեն kur-me-siki-ն արտահայտությունը բարձրանվել է ասրբեր կերպ (տե՛ս օրհնակ Kramer, 1952, p. 21; Kanera, 1964, c. 208, 210; Cohen, 1973, p. 123; Berlin, 1979, p. 57 և այլն): Փոսնի որ «մե» էին կոչվում աստվածային օրհներկները, մեր մախնիներում ենք «աստվածային սուրբ օրհնաց երկիր» բարձրանությունը:

<sup>2</sup>B. K. Aghanadzesa, Me, MHM, v. 2, 1992, c. 127.

<sup>3</sup>Kramer, 1952, p. 43; Kanera, 1964, c. 218; Cohen, 1973, p. 140 (բարձրանություններում կան ոչ էական տարբերություններ. մենք հետևել ենք վերջին երկուսին):

<sup>4</sup>Համա է կոչվել իովանավոր աստվածությունն ընդհանրապես: Այս բնագրի մեկ այլ հատվածում (տող 221-225) նշվում է, որ Արատտայի տիրակալը նշանակված է իշխելու «տիեզերքի տիրուհու» Ինաննայի «սուրբ մեղրով», ուստի հնարավոր է,

Երկնային յոսն պատկի մնամ որոշեց ճանապարհն Արատտայի,  
Այնժամ ես ին մնմորյան ժաօն հաստատ իմացա...<sup>1</sup>

Հին առաջադիտասիական քնագրերը պահպանել են լեռնաշխարհի հետ կապված և «ծայա» կիցով գեղանման ու տեղանունների բազմաթիվ հիշատակություններ: Մասնավերապես «ծայա» գեղանուն և տեղանուն են բազմիցս հիշվում Էշլայի (Սիլիսայի հյուսիսում, Բ.ա. 24-23-րդ դդ.) քնագրերում, ընդ որում, ամփված ճակ Արնի ու Ազի հայաստանյան քաղաքների հետ<sup>2</sup>: Միջագետքյան քնագրերում Սուրուր (Սուրբարի) երկրանվանը համարվել էր տեղանունը «Հայա երկիր» (քաղաքը)<sup>3</sup> է՝ «Հայա» գեղանունը հիշվում է Բ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծով բվագրվող Աշուրից գտնված մի քնագրում<sup>4</sup>: Իսկ խեթական արձանագրություններում Բ.ա. 15-13-րդ դդ. հիշատակվում է Հայասա երկրանունը, որի «Կայա վերջավորությունը խեթական տեղանվանակիրա ժաօնիկ է՝ Հանակարդի մեջ դիտելիս ակնհայտ է մեջ լեռնաշխարհի հետ կապվող Հայա աստծու անվան, շունքա-արքայական, էրայական, հին աշուրական և խեթական աղբյուրների «ծայա» գեղանման ու նրանով կազմված տեղանունների և նախ ժողովրդի ինքնանվան ժազոմնաբանական ընդհանրությունը:

Հայա աստծու կապը Հայկական լեռնաշխարհի հետ ասավել ընդգծվում է նրա որդու՝ բնության և զարթոնքի աստված Դոմոզիի Արատտա երկրի նախնավոր աստվածը լինելով: Ուշագրյով է, որ միջագետքյան Դոմոզի-Նոանոզր ծանալատասխանում է Օրֆոնիս, որն Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ (Հոր, 9, 9) փոխարինված է Հայկով՝ Այսինքն Արատտայի նախնավոր աստվածը եղել է Հայկը: Հայայի որդի Դոմոզիի անունը նշանակում է «հարսզատ» (խակական) որդի, իսկ «Հայկ» անունը կազմված է «ծայ(ա)» գեղանունից (կամ դիցանունից) և «իկ մասնիկից (հմնո, հնդ-իկ, պարս-իկ և այլն), նշանակելով «ծայ(ա)» գեղը (կամ աստծու) ներկայացուցիչ, որդի: Հայա (Լեկի) աստվածը շունքա-արքայական դիցաբանության մեջ աղարչագործության գլխավոր դեմքերից է, իսկ Հայկ նախնային ժաօն Մար Արաս Կատինայի մատչանից բաղելով Խորենացին գրում է «Աստվածներին առաջիննին ստեղ լին և երևելի, և աշխարհի մեծանն թարիքների պատմառ, աշխարհի ու բազմամարտության սկիզբ: Մրանցից առաջ եկավ հսկաների սերունդը... Մրանցից մեկն էր և Հայատտության Հայկը»<sup>5</sup>...

---

որ «գարեկոր ըման» և վերջերի Ինաննային (հմնո, հետագայի նախ Անանի-տին), որը Դոմոզիի սիրելյալն ու կինն էր:

<sup>1</sup>Kramer, 1952, p. 23; Kautz, 1964, c. 211-212; Cohen, 1973, p. 125.

<sup>2</sup>Huason, 1983, c. 31-33; Մոխրյան, 1993, էջ 119-121:

<sup>3</sup>Geib, 1944, p. 31, 94-96.

<sup>4</sup>Huason, 1983, c. 30-31.

<sup>5</sup>ՀԺՊ, էջ 190-194 և գրականությանը (քառիկ հեղինակ՝ Մ.Տ.Երևանյան):

<sup>6</sup>Մառքոսյան, 1993, էջ 304:

<sup>7</sup>Մոխրյան Խոզենցի, 1981, էջ 109:

Ամեն բան կարծես իր տեղն է ընկնում, և մեր սոցիալական է հայոց ծագումնաբանության մտազգլած կարևորագույն մի էջ: Ըստ այդմ, մենք սերուն ենք այսպիսի, աստվածների մեջ իմաստնագույն Հայ(ա) աստծուց, որի որդին էր դուրսագն Հայկը<sup>1</sup>: Նրա անունը նշանակում էր Հայ(ա)ի որդի, ներկայագուցիչ, այսինքն՝ հայ, աստի և ինչպես Պատմաբանը է վկայում, նրա անունով կոչվեցինք բոլորս (Հայկ-հայ, Հայկը-Հայր-Հայաստան): Իսկ աստծու անունով ժողովրդի ու երկրի անվանակոչումը հայտնի երևույթ է հին աշխարհում (օրինակ՝ Աշուր աստծու անունով՝ Աշուր երկիրը, մայրաքաղաքը և ժողովուրդը)...

### ՎԵՐՉԱՐԱՆԻ ՓՈՒՍԼԵՆ

Ավարտելով աշխատանքը, որն առաջին փորձն է ի մի բերելու Հայաստանի մասին Առաջավոր Ասիայում տարածված վաղնջական պատկերացումների առանձին դրվագները, մեկ անգամ ևս նշենք, որ այն չի հավակնում սպասել և վերջնական լինելու, քնդգրկելու առկա ողջ մյուսը: Բերված նյութն էլ, սակայն, լիովին բավարարում է պահանջներն հին առաջավորասիական հոգևոր ընկալումներում Հայոց երկրի և ժողովրդի կերպարը: Դրանց համաձայն՝ մեր լեռնաշխարհը, նախքան մարտիրոսյան արարածը, եղել է աստվածների բնակության վայր, այստեղ է գտնվում կենսաառարկի կացարանը: Մեղսագործ մարտիրոսյան, այստեղ էր գտնվում կենսաառարկի կացարանը: Մեղսագործ մարտիրոսյան կործանումից հետո կրկին մեր երկիրը դարձավ մարտիրոսյան վերածննդի վայրը, որ կնքվեց Աստու ու մարտկանց հավիտենական ուխտը: Մեր երկրում են պահվել անմահության ու իմաստության խորհուրդները, տիեզերքը կառավարող սրբազան օրենքները: Աստվածային այդ երկրում ապրելու մենաշնորհն ունենալ բարեպալտ մեր նախնիները, որոնք ընտրյալներն էին բնության ու զարթոնքի աստծու, որդիներն արարչագործ իմաստնագույն Հայա աստծու, որի անունով էլ քերև, կոչվեց մեր ժողովուրդը...

Մեր երկրի՝ սրբազան և ժողովրդի՝ աստվածբնության լինելու մասին պատկերացումները շարունակեցին գոյատևել նաև քրիստոնեական շրջանում, չնայած, որ Աստվածաշնչում քննարկել են համարվում կրեաները:

Եղիշեն, ճկատի ունենալով դրախտի տեղը վկայող երկու գետերը (Եփրատն ու Տիգրիսը) և տապանը, որպես մարտիրոսյան վերածննդի խորհուրդ, մեզ գերադասելի է համարում շատ ուրվշնչից. «Երկու գետով եւ տապանտուն գեր ի վերայ ենք բան գյուղին: Եւ թէ զի՛նչ օգտու է, նախ իմաս-

<sup>1</sup> Հին աքեյական սեպագիր արդյուրներում հիշատակվող Հայա աստվածը նույնպե՛ս է հայոց անվանադիր նախնի Հայկի հետ (Նապան, 1985, էջ 84-97; Մովսեսյան, 1992, էջ 40-41; Փիլիպոսյան, Զանալյան, 1997, էջ 67-69): Դոմոսի-Օրիոն-Հայկ համադրումը և վերոնշյալ փաստերը ստիպեցին մեզ վերանայել այդ սենակետը և հանգել Հայկի՝ Հայայի որդին ցնկելու կարծիքին: Հայան իր հերթին համարվել է նախաստեղծ օվիպանոսի Նանոսի (հնճա. նաչկ. էպոսի Մովինալին) որդին:



տաքեան պատճառ է մեզ, անմտաց սրտերով զԱստուծոյ արարչութեան, եւ ակն առնել վառիտմանն ի նոյն, ապա եւ Երկս բարեխօսա ունինք առ Աստուած՝<sup>1</sup>...

Գրիգոր Լարեկացոյ «Հարություն տաղան» քրիստոնեական ողբ աստվածաբանությունը խորհրդանշող սայլի ճանապարհը դնելի էրուսողն սկսվում է Մեծ Մասիսից. «Մաղն այն իջանէր ի լեռնն ի Մասեաց ... եւ ճոնչալով զայր մտաներ յերեսաղեն»<sup>2</sup>...

Հովհաննես Խնամասերը, նշելով հայերի և հրեաների աստվածընտրյալ լինելը, քնդգծում է հայերի ասացնությունը հրեաների նկատմամբ. «Այդ՝ զչարածուն անաց երրայեղոց եւ զանչարծարին հայ ամազդ տանձանեաց Բարձրեայն, վի հասառ, եւ զիր եւ տունար այս երկու ազգնս միայն ետ Աստուած, եւ այլոց ազգացը մարդկան են աբարեալ զիրս հայոց՝ աստ ի վերայ վրնի որդին աբով, անդ ի տախտակս քարեղենս, գտովնարս անդ Մովսէս, աստ՝ Հայկն, յատաք քան զնա, զհավատս՝ անդ ի լեռնն ի վայր պատգամաւ, աստ ի վերայ վրնի ոտամբ ինքն Աստուած»<sup>3</sup>...

